

# ԱՆՀԱՏԱԿԱՆՆ ՈՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆԼ ՈՐՊԵՍ ՓՈԽԿԱՊԱԿՑՈՒԱԾ ԻՐՈՂՈՒԹԻՒՆԵՐ՝ ՀՐԱՆՏ ՄԱԹԵՒՈՍԵԱՆԻ «ՆԱՆԱ ԻՇԽԱՆՈՒՀՈՒ ԿԱՄՈՒՐՁԼ» ՎԻՊԱԿՈՒՄ

ՎԱՉԻԿԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ  
vachik\_grigoryan@mail.ru

## ՄՈՒՏՔ

Մաթեւոսեանի այս վիպակը պիտի տպագրուէր «Մենք Ենք, Մեր Սրբը» վիպակի հետ՝ դեռևս 1962ին։ Միայն քառասուն տարի անց այն լոյս աշխարհ եկաւ։ Անհնար էր գրա տպագրութիւնը այն առումով, որ հեղինակը ուղղակիօրէն նկատում էր խորհրդային երկրի անկումը՝ կապուած սխալ տնտեսավարման քաղաքականութեան հետ։ Այս ամէնն իր հետ բերեց եւ բարոյական անկում, մարդկային նկարագրի խեղում։ Վիպակում խստօրէն քննադատում էր գաղափարախօսութեան հետեւանքով հասարակական կեանքի բոլոր ոլորտներում գոյութիւն ունեցող ճգնաժամը։ Ելքեր չկային։

Այս ամէնով հանդերձ՝ գրողը ստեղծել է տպաւորիչ կերպարներ։ Ամէնից կարեւորն այն է, որ այստեղ նա յայտնաբերել է իր կենտրոնական հերոսներից մէկին՝ Իշխանին, որ այսուհետեւ նորանոր կողմերով բացայացուելու էր նրա միւս երկերում։ Խսկ մնացած կերպարները եւս ինքնատիպ են ու չկրկնուող, եւ հարստացնում են գրողի կերտած հերոսների շարքը։

«Առաջին գիրքը 1967ից առաջ պիտի լիներ։ Ծարեցին ու շարուածքը թափեցին...»<sup>1</sup>։ 2003ին Հայեացք Երեւանից ամսագրում տպագրուեց վիպակից մի հատուած, իսկ 2006ին լոյս տեսաւ առանձին գրքով։ Քառասուն տարի յետոյ միայն տպագրուած երկը բաւականաչափ ուշացումով մտաւ գրական շրջանառութեան մէջ։ Զի կարելի անտեսել նաեւ այն, որ յետագայում գրողն առանձնակի ջանք չգործադրեց այն «լոյս աշխարհ» հանելու համար։ Մաթեւոսեանն ասում է, որ սկզբում Մմակուտն իրեն ներկայանում էր ոչ թէ իրեւ սովորական լեռնային գիւղ, այլ իւրօրինակ գրախտ, որն աստիճանաբար տեղի է տալիս այստեղ ներթափանցող ուժերի առջեւ։ Այլ կերպ՝ «Երեւոյթի զարգացման ներքին տրամաբանութիւնն ակնյայտ էր եւ շուներ ընդհանրացումների այն ուժը, ինչը բնորոշ է գրողի ստեղծագործութեանն ընդհանրապէս»<sup>2</sup>։ Եթէ մատուցման ձեւով այն կապւում էր հայ գրականութեան դասական աւանդներին, ապա բովանդակային առումով երկրի՝ համակարգային բնոյթ ունեցող հակասութիւններին։ Նման գործի տպագրու-

թիւնն աւելորդ ու անտեղի ջանքեր պիտի խլէր հեղինակից, ուստի այն «մի կողմ» դրուեց՝ «յարմար» ժամանակի ակնկալիքով։ Դրան պէտք է յաւելել նաեւ այն, որ աշխարհայեացքային ընկալումների մէջ այնքան արագ էր տեղի ունենում զրոյի հասունացումը, որ երէկուայ արուածն արդէն թւում էր անցած շրջան, դրան անդրադառնալու ոչ ժամանակ եւ ոչ էլ ցանկութիւն կար։

Այսուհանդերձ վիպակը շարքային ստեղծագործութիւն չէ, այն ի-մաստով, որ այստեղ բացայայտուած մարդկային տիպը միանգամայն նոր բարոյական նորմերի, նոր աշխարհայեացքային ընկալումների կրող է, հետեւապէս նիւթի դիմադրութիւնը մշտապէս ստեղծում է լարուած մթնոլորտ, մանաւանդ որ գրոյի նպատակը չի սահմանափակում որեւէ բնաւորութեան բացայայտմամբ։ Գրողը ճգտում է հասարակական կեանքի լայն պատկերման։ Ակնյայտ է, որ համայնական սեփականութեան՝ կոլխոզի սխալ տնտեսավարումը հոգեբանօրէն փոխում է մարդուն։ Բայց սա երեւոյթների ընկալման արտաքին կողմն է։ Իրականում գրողը որեւէ կերպ չի շեղուել իր համար նախընտրելի ուղուց։ Այստեղ էլ նրան հետաքրքրում է երեւոյթների ծագումը, երեւոյթների զարգացման ընթացը։ Միմեանց հակադրուող բնաւորութիւնները ոչ այնքան սոցիալական, որքան գոյաբանական կտրուածքով են ներկայացւում։ Հայ գրականութեան մէջ պարագծուած բարոյաբանական ընկալումներն իրականում տեղի են տալիս նոր պատկերացումների առջեւ, մարդիկ աւելի ենթակայ են գոյաբանական օրէնքներին։ Այս տեսանկիւնով միայն կարելի է դիտել «Նանա Իշխանուհու կամուրջը» վիպակի հերոս Իշխանին, հակառակ դէպքում այն կը դառնայ «աւելորդ»։ Յաղթում են, շարունակութիւն են գտնում նրանք, ովքեր ուժեղ են, ովքեր արագ են կողմնորոշուում, ովքեր որոշումներ ընդունելու համարձակութիւնն ունեն, ովքեր պատասխանատուութիւն են զգում իրենց արարքների եւ դրանց հետեւանքների համար։

\*

«Տարիները յարմար էին բալանի. իշխանութիւն չկար. զաւառապետին բանտարկեցին՝ տեղը նատեց դաշնակցութեան լիազօրը. լիազօրին քշեցին վրացիները. յետոյ եկան գերմանացիները, ապա անգլիացիները։ Եւ այնքան արագ էին փոխարինում իրար, որ մարդիկ սկսեցին խառնել ով փախար, իինա ով է տիրականը»<sup>3</sup>. Ամէն ինչ խառնուել է իրար, դժուար է գլուխ հանել հարահոս փոփոխութիւններից, ձնահիւսի նման մարդկանց գլխին թափուող արհաւիրքների տարափից։ Այստեղ դժուար է խօսել դարերով աւանդուած բարոյական սկզբունքների մասին, որով պիտի առաջնորդուի միջավայրը եւ իրեն պահպանի։ Աշխարհը ժամանակի հոլովոյթում հարստացել է այնպիսի որակներով կամ «արժէքներով», որոնք հեռու են բարոյականութիւնից։

կեանքը զարգացման «տրամաբանութեամբ» պարզապէս դուրս է բարոյական ընկալումների շրջագծից:

Մարդկային մթին բնագդներն ընդգծուած կերպով ի յայտ են գալիս անցումային շրջաններում, երբ բարոյական արժէքները տեղի են տալիս, իսկ նրանք, ովքեր այնուամենայնիւ փորձում են իրենց «նախնական կերպի» մէջ մնալ, ոչինչ չեն որոշում: Տարիներն այնպիսին էին, որ «ազնիին էշ էին ասում, եւ էշերը շատ էին»: Բայց թիշ չէին եւ թալանողները, թէեւ այդ ճանապարհը եւս նրանց ապահով ու հարուստ չի դարձնում, շատերն էին մնում սոված, կշտանում էին միայն քչերը: Գաւառում միայն իշխանը կարողանում է հարստանալ, չաքսորուել, չկասկածուել, աւելին՝ յարգուել իշխանութիւնից:

«Ասում էի, իշխան, ամօք է. ասում էր «ասա, բայց իմ գործին մի խառնութիր» (40), - խուլ եղբօր՝ Զարմայրի դիտողութիւնները կեանքի հանդէպ դրսեւորած հակադիր պատկերացումների վկայութիւն են: Խուլը չի կարող ընկալել ժամանակի «ոգին» այն պարզ պատճառով, որ դարերով աւանդուած բարոյական արժէքների կրողն է: «Ասում էր «Իշխան»ն», ասում էր «Տիրացու թեզօն ես, Էլի» (40): Միայն ժամանակի հեռուից Զարմայրի յիշողութեան մէջ մնացել է իշխան - լաւը: Ժամանակ էր պէտք, որպէսզի նա բարձրածայնէր իշխանի «ճշմարտութիւնը», բայց ամէն ինչ այնքան էլ պարզունակ չէ այն իմաստով, որ իշխանի դիրքորոշումն իրականում հակադիր է նրանց տոհմի՝ Դեւոյեանների ապրելու սկզբունքներին: Տարիներ էին պէտք, որ պարզ դառնար, թէ որդիներից ու թոռներից ոչ մէկն էլ իշխանի նմանը չի: Նրանք չունեն այն նախայարձակ կեցուածքը, ինչը յանկարծ բացայայտուել էր տոհմի երկարամեայ պատմութեան մէջ: Ուկանն ուժի կողմից է նրան քաշել, Արտաշը՝ խորամանկութեան, Հայկազը խելքով էր իշխանը, Վարդանը հօր պէս մաքուր սիրտ ունէր: «Բայց շորսը միասին, դրանց վրայ էլ աղջիկը, Իշխանի կէսը չեն» (40): Նրա յետնորդները մանրացել են, նրանցից ամէն մէկը հազիւ է զօրում նախնու այս կամ այն որակը իր մէջ կրել: բնականաբար նման մարդը ոչ կարող է հարկ եղած դէպքում ինքնապաշտպանուել, ոչ էլ նրանից հնարաւոր է օգնութիւն ակնկալել:

Դեւոյեան տոհմը հարիւր քսան տարի կրում էր Արդութեան-Երկայնաբազուկների պարտադրած լուծը, նրանք բանող անասունի յամառութեամբ աշխատանքն ու իրենց գոյութիւնը դարձրել էին միասնական ու միօրինակ օրերի կրկնուող շարան: Մեծացողներին ամուսնացնում էին, նրանց ընտանիքներում որեւէ վէճ չէր լինում, եկած հարսն այստեղ էր պառաւում եւ թաղւում էր գերեզմանոցի Դեւոյեանց մասում:

Ու թւում է՝ ցեղը շարունակելու էր ապրել հարհանդ կեցուածքով, բայց իշխանը «խախտում» է ընդունուած կարգը: Ցեղի դարաւոր խուլ

բողոքը փլել է ինքնազապման ամբարտակները. «Ասում եմ, գուցէ տոհմը լծուածի ամբողջ խուլ բողոքը հաւաքել էր, որպէսզի ծնէր կատաղած Իշխան» (41):

Մաթեւոսեանական աշխարհը ձերբազատւում է սոցիալական հիմնաւորումներից, մարդկային արարքների դրդապատճառները հեղինակը փնտուում է այլ տեղ: Այստեղ էլ հարցադրումները գոյարանական նշանակութիւն են ստանում: Միջավայրը յատակօրէն բաժանուած է երկու հակադիր ուժերի՝ ամբոխի եւ առաջնորդի միջեւ. դրանք գոյընթացն ամբողջացնող հիմնական ուժերն են, որ տարրեր են, բայց եւ միասնական: Նիցչէն եւս հասարակութիւնը բաժանում է երկու մասի: Ամորֆ - անդէմ նախիր եւ անհատ-առաջնորդ: Նա եւս դրանց տարանջատումն իրականացնում է բնական, կենսաբանական հիմքի վրայ: Առաջնորդները ոչ թէ նրանք են, ովքեր նշանակուած են այդ գործին եւ ղեկավարում են հասարակութիւնը, այլ նրանք, ովքեր կոչուած են այդ դերին: Այս ամէնը կանխորշուած է ծնունդով: Այս պատճառով էլ «գոյություն ունի տէրերի բարոյականութիւն եւ սարուկների բարոյականութիւն»<sup>4</sup>:

«Ասում եմ, գուցէ տոհմը լծուածի ամբողջ խուլ բողոքը հաւաքել էր, որպէսզի ծնէր կատաղած Իշխան» (41): Կամ «Գուցէ ջղային ու կոռարար էր այն պատճառով, որ տոհմը հարիւր քան տարի չէր ունեցել ոչ մի ջղային նոպա»...» (41):

Տոհմը նրան ծնել էր ի պատասխան դարաւոր զրկանքների, ի վերուստ տրուած հնագանդութեան զգացողութիւնը փորձել էր նոր ուղի գտնել: Դեւոյեան տոհմը, խուլերի այդ նախիրը, լեթարգիական քնից արթնացել ու անցեալի անդունդի մէջ առաջացած ցեղի ինքնակայ գոյցութիւնից կորզել էր կեցութեան մէկ այլ տրամաբանութիւն՝ ուժեղի տրամաբանութիւնը: Իշխանի նախայարձակ կեցուածքը պայմանաւորուած է ծնունդով: «Մարմնով կը լինէր այսպէս միջահասակ, բարակ-մարակ, մի քիչ կոացած: Դարչնին տուող նօսր մազեր ունէր, բափում էին: Ուսուցիկ ճակատը լայնանում էր: Ճակատից երեսում էր, որ կատաղած շուն է» (41):

Իշխանին զայրացնում էր ցեղի անասնական հանդարտութիւնը, որ ոչինչ չէր տալիս՝ բացի ի վերուստ տրուած ենթարկուելու ցանկութիւնից: Իշխանը չի ուզում աւելացնել «նախիրը» համալրողների թիւը: Ժամկոչի հաստ, մի քիչ ծանր լսող ու մի քիչ ուշ հասկացող աղջկան իշխանին ուզեցին, մօտը մէկ օր պահեց:

Վերափոխումների շրջան ապրող ամբոխացած հասարակութիւնը անհանդուրժող է ինչպէս իրենից դուրս գտնուող այլ ամբոխի հանդէպ, այնպէս էլ իր ներսում գտնուող, իրենից վեր բարձրանալ ցանկացողի: Մարդկային բարոյականութիւնը տեղի է տուել մուլթ բնագդների առջեւ, բայց դրանք են շարժում կեանքը:

Իշխանն այս ամէնը ոչ այնքան հասկանում, որքան գգում է՝ զիշատիչի ներքին բնագդով։ Նա իր տեսակը պահելու, ժամանակի մէջ ապահով ու անվախ սերունդ ունենալու համար կարեւորում է ինչքի խնդիրը։ Հարստութիւն ունենալին ինքնանպատակ չէ, դա ոչ այնքան իր, որքան այն արժանաւորի համար է, ով իր տեսակն աւելի ուժեղ ու ապահով է դարձնելու։ Իշխանը տեսնդօրէն փնտռում է նրան, ով կը լինի իր նպատակն իրակնացնողը։ Մարդու տեղը հասրարակական կեանքում մեծ չափով որոշում է նախնական պայմաններով։ «Եթէ դու աղքատ ես լոյս աշխարի եկել, ծնողներից, ովքեր ամէն ինչ մսիսել են եւ ոչինչ չեն կուտակել, ուրեմն դու «անուղղելի ես», դա նշանակում է հասունացել ես տաժանակիր աշխատանքի եւ խելազարների տան համար»<sup>5</sup>։

Եկել է մի ժամանակ, երբ տեղի ունեցած փլուզումը խաթարել է միջավայրում գործող ընդունուած կարգն ու կանոնները, ստեղծուել է իրավիճակ, երբ թւում է՝ բոլորն են յայտնուել մեկնարկային «միեւնոյն» գծի վրայ։ Զեան այեւս ստեղծուած պայմանականութիւնները։ «Զարմայր, ասաց, լաւ ժամանակներ են, կամ զլուխ պէտք է ընկնենք, կամ բոլորովին տակ» (43)։

Իշխանը՝ ծնունդով առաջնորդը, շատ արագ է որսում փոփոխութիւնների իմաստը, նա հասկացել է վերափոխումների կարեւորութիւնը. եթէ դրանք աւելի նպաստաւոր պայմաններ չեն ստեղծելու, ուրեմն աւելորդ են, վերջին հաշուով կեանքն է գտնում միջավայրը կարգաւորելու ձեւերն ու մեխանիզմները։ Եւ քանի որ ժողովուրդն անտէր է, հետեւարար ծնունդով առաջնորդն ինքն է տէր լինելու ստեղծուած կացութեանը։ Իսկ Զարմայրը ծնունդով իսկ «պարտադրուած չէր» տան, ցեղի առաջնորդը լինելու։ Ռւստի եւ Իշխանի պահանջին պարզապէս չի արձագանգում։ «Քեզ ձգիր։ Բայց նայելով եղրօր միամիտ աչքերին եւ ոտից զլուխ չափելով նրան, ձեռքը քափ տուեց. – Քեզանից ձգուել չի լինի» (43)։

Զարմայրը դրսում ոչինչ չէր կարող անել, նա պատրաստ չէր գոյութեան կոռուին, եւ դա Իշխանը լաւ էր հասկանում։ Նա պատասխան լսելու ակնկալիք չունի, ինքն է պատասխանելու եղբօր փոխարէն։ «Աւնակ մի քան են խնդրում. տանը դու աշխատիր, ես աշխատող չեմ. սիրտս չի դիմանում» (43)։

Տանն աշխատելու վտանգներն սպառուած են, դրսում դրանք առաւել քան ակնյայտ են, եւ դրանց դիմակայելու խնդիրն Իշխանն իր վրայ է վերցնում։

Մաթեւոսեանն ստեղծում է հայ գրականութեան բացառիկ ընաւորութիւններից մէկը, որ աչքի է ընկնում բնաւորութեան ինքնուրույնութեամբ, ներքին ազատութեամբ, չկաղապարուած մտածողութեամբ, խնդիրների լուծման ճանապարհի յայտնաբերման ինքնատիպութեամբ։ Կեանքն առաջադրում է խնդիրներ, Իշխանը պատրաստակամութեամբ

է ընդունում դրանց լուծման անհրաժեշտութիւնը: Նա լաւ է հասկանում, որ դրանցից խուսափումը կը բարդացնի իր եւ սերունդների ճակատագիրը: Ուստի եւ կեանքի առաջադրած հարցերի պատասխանները նա գտնում է սեփական ձեռներէցութեան, սեփական որակների շնորհի՝ առանց որեւէ մէկի օժանդակութեան: Բայց միայն սա չէ նրա անկախ բնաւորութեան հիմնական բաղադրիչը: Իշխանը խկապէս պատրաստ է պատասխան տալու այն ամէնի համար, որոնք կարող են հետեւանքը լինել իր խկ գործողութիւնների: Բայց սրանով էլ չի սահմանափակում այս բնաւորութեան հոգերանական նրբութիւնների պարագիծը: Իշխանը՝ որպէս անհատականութիւն, համոզուած է, որ իր ձեռնարկումներն ու արարքները խիստ որոշակի բնոյթ ունեն: Իշխանը գործի մարդ է, նա սեփական ձեռքերով ուզում է շօշափել իր գործունէութեան արդիւնքը: Նա նիւթի աշխարհում գործող, բնազանցականը մերժող անհատն է, որ գործնական է եւ չի սիրում նրանց, ովքեր տարուած են վերացական գաղափարներով եւ չեն վստահում իրենց տեսածին ու սեփական փորձին, իմացութեանը: Խսկ բարոյակա՞ն է այն, ինչ անում կամ գործում է իշխանը: Նա զրա մասին մտածելու կարիքը չունի, քանի որ կեանքն է պարտադրում ապրելու ձեւը եւ հարկ է պատրաստ լինել դիմակայելու ամէն կարգի մարտահրաւէրներին:

Իշխանի կատարեալ հակապատկերն է Զարմայը: Սա իր լեզուամտածողութեամբ, հոգերանութեամբ, արարքներով կրաւորական վարքագիծ դրսեւորողն է: Երբ տունը լքելուց երկու տարի անց Իշխանը ոտք է դնում այդ բնի շէմին, իրենց հայրը՝ տիրացու Բեգօն ալլեւս չկար, Զարմայըն առաջին անգամ, ինքնուրոյն, չգիտէր՝ ինչ անել, նա նման էր ամպրոպների տակ ընկած ոչխարի: Նա խուլ է ինչպէս ուղղակի, այնպէս էլ անուղղակի իմաստով: Ներամփոփուած ինքն իր մէջ՝ խուլը չի տեսնում միջավայրում տեղի ունեցող փոփոխութիւնները: Խսկ ինչ որ յիշում է, հիմնականում կապուած է սեփական ապրումների կամ արարքների հետ: Խօսքը երախտագիտութիւն է՝ ուժեղին, հնարամիտին, իրադրութեան տիրոջն ուղղուած: Բայց երբ այս ամէնի մէջ առկայ է անվճռականութիւնը, այս պարագայում մարդն ուղղակիօրէն զրկում է որեւէ գործ իրականացնելու հնարաւորութիւնից, նրան մշտապէս տանջում է չարածի մեղքի զգացումը: Անվստահութիւնը միանգամայն իրական հնարաւորութիւնների հանդէպ ի վերջոյ մարդուն մղում է յարմարուղականութեան կամ ընկերային կեանքում անտարբերութեան: Պատահական չէ, որ անգամ կոլտնտեսութեան դեկն ստանձնած ժամանակ Զարմայը խորհուրդներ է հարցնում իշխանից:

Այսուհանդերձ կարելի է այս հակադիր բնաւորութիւնների միջեւ ցոյց տալ հոգերանական այն կարեւոր սահմանագիծը, որ բաժանում է Իշխանին եւ ժամանակակիցներից, եւ յետնորդներից: Երեւոյթների էութիւնը, դրանց զարգացման տրամաբանութիւնը հասկանալի դարձ-

նելու համար Մաթեոսի անը ներկայացնում է աւելի տեւական ժամանակ, ասելիքն իմաստաւորելու նպատակով գրողը համադրում է «տարբեր» ժամանակները:

Մարդկային բարոյականութիւնը մաքուր հիմքեր է ունեցել՝ դրա մասին է վկայում հեղեղների ու պատմութեան արհաւիրքների դէմ յանդիման, ժամանակի հանդէպ, թւում է, անհաղորդ մնացած նանա իշխանուհու կամուրջը: Եւ անցեալի ու ներկայի միջակայքում էլ գրողը նկատում է մարդկային բարոյականութեան, հոգեբանութեան մէջ կատարուած այն տեղաշարժերը, որոնք այսօր բովանդակութեան նոր «որակ» են հաղորդում ժամանակին:

Ահա ժամանակի տարբեր հատուածների համադրումն էլ տեսանելի է դարձնում հոգեբանական այն սահմանագիծը, որ բաժանում է իշխանին եւ ժամանակակիցներից, եւ յետնորդներից: Նրանք որակապէս տարբեր մարդիկ են այն պատճառով, որ առաջինն առանձնանում է ընաւորութեան անհատական որակների կայունութեամբ, իսկ միւսները փոփոխական են ու անկանխատեսելի: Եւ պարզից էլ պարզ է, որ կարեւոր, կայուն անհատական որակներն աւելի խորն են ու հիմնաւոր՝ անկայուն որակների համեմատութեամբ: Անհատական որակները բացայատւում են կեանքի սահմանագծային, մասնաւորապէս բախումային իրադրութիւններում:

Իշխանը վերադարձել է կնոջ հետ, ժամանակները քիչ է ասել՝ խառն են: Պատերազմ է, ամէն տեղից չքաւորութիւն է թափւում. օճառ չկայ, չաքար չկայ, հաց չկայ: «Փեսային Հաղպատ սպանել էին, եւ քոյրը որբը գրկին, ծուարել էր Զարմայրի մօտ: Խօսք կար, թէ սրան էլ վերցնում են բանակ: Ու ծորից, քաղաքից բարձրացաւ Իշխանը՝ կնոջ ու երեխայի հետ» (43):

Ամէն ինչ խառնուել է, ամէն ինչ թւում է՝ գլորուել է անդունդը: Յոյսի որեւէ շողք, որեւէ նշոյլ խակ չի երեւում... Իշխանն ի վերջոյ յայտնուում է բոյնը թողած բազէի պէս որպէսզի կարգաւորի իրերի խաթարուած ընթացքը: Մէկ անգամ եւս ակնյայտ է դառնում նրա ընաւորութեան առանձնայատկութիւնը՝ ներքին ազատութեամբ ու որոշումներ կայացնելու կարողութեամբ, որի արդիւնքում ծեւաւորւում է նախայարձակ անհատականութիւնը: Նա կենարոնացնում է ողջ ներուժը, ճարպկութիւնը, հմտութիւնը, մտքի սրութիւնը, որպէսզի կարգի բերի ստեղծուած կացութիւնը, ինչն իրեն բոլորովին չի բաւարարում:

Այլ է Զարմայրի վերաբերմունքն այս ամէնին եւ մասնաւորաբար քրոջ ողբերգութեանը: Նա աւելի շուտ, քան թերեւս քոյրը, կարողացել է համակերպուել ստեղծուած կացութեանը այն ներքին համոզմամբ, որ ինքը որեւէ կերպ չի կարող ներազդել դէպքերի ընթացքի վրայ: Ինչ վերաբերում է քրոջը, ապա նա միանգամայն այլ հոգեբանութեան կրող է, բնականաբար աւելի անկայուն ու վեճերոտ, քան Զարմայրը: Նա ոչ

միայն չի փորձել ինչ-որ կերպ յաղթահարել ստեղծուած կացութիւնը եւ կամ էլ համակերպուել ստեղծուած իրավիճակին, այլ նախընտրել է հեռանալ այդ վտանգաւոր միջավայրից եւ ապաստանել եղրօր մօտ:

Իշխանի կամքի առաջ փուլ են գալիս ամէն կարգի պատնէլ ու ամբարտակ: Նա ուղղակի տեսնում է սեփական հակառակորդին եւ գնում է նրանից հաշիւ պահանջելու: Նա անկասելի է նպատակի իրականացման ճանապարհին, որովհետեւ բացաչք տեսնում է նրան եւ չի խուսափում թշնամու անունը տալուց՝ ի տարրերութիւն միջավայրի, որ թէեւ գիտէ մարդասպանին, բայց անգամ ենթագիտակցութեան մէջ, ինքն իր համար անգամ չի բարձրաձայնի նրա անունը. դա եւս դժուարութիւնից խուսափելու հոգեբանական, ինքնախարէութեան մի ձեւ է: Մինչդեռ իշխանը որեւէ կերպ չի կարող տանել քրոջը հասած դժբախտութիւնը. հարկ է ժամ առաջ պատճել մեղաւորին, կրած վնասն էլ ինչ-որ կերպ փոխհատուցել:

Իշխանի յայտնութեամբ միջավայրն սկսում է «կենդանանալ», իրերի զարգացումը բնական ընթացք է ստանում: Վերադառնում է չորս օրից, եղրօրը փող է տալիս՝ առաստաղը տախտակելու համար եւ պատուիրում քրոջը Սմակուտ տանել: Նա հակառակորդին բանակ էր քշել՝ նախապէս խլելով վնասը. «Վզիդ որքի ու կնոջ հաց է ընկած» (43): Իշխանը երբեք թոյլ չի տայ, որ վնաս տուղոն ինքը որոշի դրա չափը: Երիցանց Մովսէսը հարկադրուած էր հրաժարուել տարիներով կուտակած հարստութիւնից: Իշխանը նրանից վերցրեց գոմէշները, ոչխարները, խալիները... եւ այս ամէնը քրոջ համար՝ որպէս օժիտ, տեղափոխեց Սմակուտ նոր փեսացուի՝ թեւոսանց Ակոփի տուն: Ընդ որում՝ քրոջը տնաւորելու այս գործողութիւնն իշխանն իրականացնում է առանց նրա համաձայնութիւնն ստանալու: Ամէն ինչ ենթակայ է առաջնորդվրիժառուի կամքին:

Եթէ անհնար է ամբողջութեամբ փոխհատուցել քրոջ կորուստը գուտ բարոյական իմաստով, ապա նիւթապէս Սմակուտը նոյնիսկ շահեց: Մինչ այդ գոմէշի երես չտեսած գիւղը լցուեց իշխանի տարած գոմէշներով:

Մաթեւոսեանն իր հերոսի հետեւողական, վրիժառու, նախայարձակ կեցուածքը մեկնաբանում է նրա ծնունդով, ներքին որակներով («Ծակատից էլ երեսում էր, որ կատաղած շուն է») (41): Այսուհետեւ դրողը երբեք էլ այն կարծիքին չէ, թէ իշխանի տեսակը ինքնակայ գոյութիւն է՝ ամբողջութեամբ ձերբազատուած սոցիալական յարաբերութիւններից: Նա չի կարող որպէս բնաւորութիւն, բացարձակապէս անկախ լինել միջավայրից, հասարակութիւնից: Բայց սա անհատի եւ հասարակութեան այլ կարգի փոխներգործութիւն է: Այստեղ ոչ թէ միջավայրը կամ հասարակութիւնն են ձեւաւորում իշխանին, այլ վերջինս է դրանցից ուժ ստանում. սա հոգեբանական ինքնուրոյնութեան կարեւո-

բագոյն նախապայմանն է: Հետեւապէս հերոսի անկախութիւնը պայմանաւորուած է ինչպէս ընութիւնից ստացած որակներով, այնպէս էլ այն միջավայրով, որտեղ նա գործում է:

Իշխանը Դեւոյեան տոհմի ներկայացուցիչն է, սակայն այս կամ այն հարցով նրան դիմում են այլ տոհմերի ներկայացուցիչներ եւս. նա պարտաւոր է լինել ուժեղ, հմուտ, սրատես ու անպարտելի: Բայց սա Մաթեւսեանի հերոսի համար «քիչ» է: Իշխանը ներկայացուցիչն է «հեղինակաւոր» աւազակախմբի, ուստի նրա մօտ են գալիս մօտակայ եւ հեռաւոր գիւղերից, նրան են դիմում ճարր հատած մարդիկ: Կորսատէրը կորսատի ետեւից Ղազախ գնալու փոխարէն գալիս էր Իշխանի մօտ, «զողերը քեզ ճանաշնիս կը լինեն, դու պատուով մարդ ես, մի քան արանի երեխէրիս հացը չկտրուի» (45): Հետեւապէս տուեալ «խմբում» տեղն ու դիրքը պահելու համար հարկ է, որ այս մարդը լինի խելացի, ուժեղ ու սկզբունքային: Հոգեբանական այս հիմնաւորումները, որոնք ձեւաւորում են ընաւորութեան ինքնութիւնը, պայմանաւորուած են մէկ այլ կարեւոր հանգամանքով: Իշխանն ուժեղ է, քանի որ հարկադրուած է դիմակայելու միջավայրին՝ մեծամասնութեանը: Այս ամէնն էլ նրա մէջ ձեւաւորել է անկոտրում առաջնորդին, եւ յանցագործ աշխարհն էլ նրա անհատական որակները նկատի ունենալով, ըստ երեւոյթին որոշակի իրաւունքեր է տուել:

Զարմայրի պատմութիւնից պարզւում է, որ ամբոխը, «մարդկային նախիրն» առանձնակի ատելութիւն ունի միւս «խմբերի» հանդէպ: Այստեղի գողերը Ղազախ էին հասցնում հարեւանների հոտերը, այնտեղինները այստեղ էին բերում ապրանքը եւն..:

Իշխանի հեղինակութիւնը Ղայրենական Մեծ Պատերազմի ժամանակ պարզապէս փրկում է գիւղի տնտեսութեան ունեցուածքը: «Գոմեր տուեցին, արօտատեղեր տուեցին. պատիսն էլ՝ ամէն օր: Գայլը լիքն էր, խեղդում էր, յետոյ՝ ոչխարի մէջ հիւանդութիւն ընկաւ, յետոյ՝ ծնի ժամանակ մեծ ջարդ եղաւ. այնպէս որ Ղազախ նտած ոչխարի հազի կէսը մնաց: Բայց որ ասես մեր ֆերմային մի քան եղած լինի - չէ, եղ՝ չէ: Ծնին օգնեցին, մեզ իրացան տուեցին, իրենցից մի երկու շուն էլ, յետոյ անասնարուժն էր օրումջ գալիս ստուգում... այդպէս: Այ, Իշխանը դրսում այդ յարգանքն ունէր» (46):

Դժուար է ասել՝ Զարմայրը, որ առաջնորդւում էր ընդունուած կարգով, կը կարողանա՞ր փրկել տնտեսութեան հոտը: Ամենայն հաւանականութեամբ չէր կարողանայ: Ժամանակն ու պայմանները թելադրում էին իրենց բարոյականութիւնը, եւ դա ուժեղի բարոյականութիւնն էր: Իշխանի վարքագիծը, նրա անցած ճանապարհը, վատութեանը վատութեամբ հատուցելու ներքին պատրաստակամութիւնը, կեանքի առաջադրած խոշընդոտները յաղթահարելու ներքին մղումը դառնում է կեանքին տուած պատասխան, հետեւապէս հարեւաններն

ամէն ինչ անելու են, որ Իշխանի բարեկամները նեղացած չեռանան սարերից:

Գրողն Իշխանի բնաւորութեան, նրա գործելակերպի դրդապատճառները հիմնաւորում է բնութիւնից ստացած որակներով: Դրանք անհրաժեշտ են նաեւ այն բանի համար, որպէսզի առաւել ակնյայտ դառնայ միջավայրում ընդունուած կանոնների ողջ «անհեթեթութիւնը»: Մարդկալին «անբնական» հակումները՝ լսել, տանել, ներել, ենթարկուել եւն. Իշխանի համար պարզապէս վիրաւորական են: Եթէ մի ժամանակ մարդկանց համար միանգամայն ընդունելի կանոն էր վրէժինդրութիւնը, ապա այն այսօր անընդունելի է: Մինչդեռ Իշխանի համար այն պատուի ինդիր է: Եթէ հասարակութիւնը վրէժի, հատուցման խնդիրը շրջանցելով «թողնում» է ուրիշներին, ապա հոգու խորքում, էութեան մէջ կողմ է դրան:

\*\*\*

Տարիների հեռուից տեղի ունեցած դէպքերի իմաստաւորումը (Զարմայրի լիշողութեան մէջ) միայն հիմնական հերոսի նկարագրին չի վերաբերում: Դա պատմողի, նաեւ միջավայրի հոգերանութեան դրսեւորումն է: Խոսքում յամենայնդէպս պահում է միջավայրի համար ստեղծուած աստիճանակարգը, այն պարմանականութիւնը, որ ստեղծուել է տեւական ժամանակի մէջ եւ որին դէմ է Իշխանը:

Թէեւ կնեազ Նիկոլ Արդութեան-Երկայնաբազուկը բաւականին լաւ մարդ է եղել, բայց ինչ արած, որ ծնուել է «ծեծելու իրաւունքով», ինչն իր հերթին վերածում է սովորութեան, որ հօր երակից անցնում է որդու երակը՝ անկախ այն բանից որդին կ'ուզէ՞ր մարդ ծեծել, թէ՞ ոչ. մի քիչ էլ հարբեցող էր, մարդիկ լիշում էին նրա խոպոտ կանչը: Նա դաշտում տարիներ առաջ ծեծել էր Զարմայրին, քանի որ վերջինս խօսքի կէսից չէր հասկացել աղային: Իրականում Նիկոլը պահում էր հասարակութեան մէջ ձեւաւորուած յարաբերութիւնների ձեւը, ոչ՝ բովանդակութիւնը: Ժամանակի մէջ ձեւաւորուած իրաւունքին հակագրում է գոյատեւման բնական իրաւունքը՝ Իշխանի նպատակամէտ կեցուածքով: Վերջինս իր գործելակերպով, հոգեբանական ներքին ազատութեամբ «հերքում» է կնեազի իշխան լինելու պայմանականութիւնը: Եթէ որեւէ մէկը վնասել է քո հարազատին, ապա հարկ է, որ ստանայ դրա պատասխանը, անկախ այն բանից՝ իշխան է, թէ՞ դաշտում տիրոջ խօսքը կէսից չհասկացող խուլ: Հատուցման պահն էլ չի գալիս կանխածրագրուած գործելառնից.՝ Իշխանը պահի մէջ գտնում է հատուցման համապատասխան ձեւ. նա ոչ մի պահի չի ընկրկում, որովհետեւ հոգեբանօրէն պատրաստ է նաեւ իր արարքների հետեւանքները յաղթահարելու:

Կնեազ Նիկոլն իրաւունք ունէ՞ր Իշխանի եղբօրը ծեծով մահամերձ վիճակի հասցնելու, չէ՞ որ Զարմայրը ո՛չ վիրաւորելու, ո՛չ մեղքի, ո՛չ

խարէութեան ընդունակ չէ, նրա մեղքը «անխելքութիւնն» է, խօսքն ուշ հասկանալը: Իսկ կնեազ Նիկոլի մեղքն այն էր, որ նա էութեամբ ազնուական չէր, այլ սովորական հարրեցող, որի ժառանգած կոչումն աւելի էր ծանրացնում նրա վիճակը: Ու նաեւ հարց է՝ Իշխանը ուշ հասկանալու համար կը ծեծէ՞ր դիմացինին: Իշխանը, իհարկէ, հասկանում էր «կնեազի» եւ բատրակի տարբերութիւնը, կեանքում նրանց գրաւած տեղը: Իշխանը հասկանում էր ոչ միայն պահի, այլ ընդհանրապէս ստեղծուած կացութեան անարդարութիւնը: Խնդիրն ունի ինչպէս հոգեբանական, այնպէս էլ ընկերային բնոյթ: Դասակարգային իրականութեան մէջ տարբեր են աշխատանքի հանդէպ դրսեւորուող վերաբերմունքը տարբեր դասերի կողմից: Դա արտայայտում է աշխատանքի արտադրողական տարբերութեան (աշխատել իր համար եւ աշխատել ուրիշի համար) եւ հենց աշխատաւորի հոգեբանական իրայատկութիւնների մէջ: Իր համար աշխատել եւ աշխատել ուրիշի համար՝ մշտապէս տարբեր քանակ եւ որակ է ունեցել: Այստեղ արտայայտում է ինչպէս նիւթեական շահագրգուածութեան բացակայութիւնը, այնպէս էլ սոցիալական խուլ բողոքը՝ արժանապատիւ կեանքով ապրելու համար: Տեւական, միօրինակ աշխատանքը Զարմայրի մէջ ձեւաւորել է բանող անասունին: Կեանքում իր գրաւած դիրքով ու աշխատանքով նա չի կարող ունենալ հոգեբանական ազատութեան այն աստիճանը, ինչ ունի իշխանը: Հասարակութեան մէջ նրա գրաւած դիրքը, նրա ինքնուրոյնութիւնը հնարաւորութիւն են ընձեռում որոշումներ կայացնելու, ինչը որոշակի ներգործութիւն է ունենում ինչպէս տուեալ իրադրութեան, այնպէս էլ իր իսկ գիտակցութեան վրայ, որ պիտի «տարածուի» եւ նրա զաւակների վրայ: Իշխանը նախընտրում է ինքնուրոյն ու ոչ վեհերոտ, կարծր ու նախայարձակ բնաւորութիւն ունեցող երեխանների, իսկ նրանք, ովքեր այդպիսին չեն, ուրեմն եւ Դեւոյեան չեն, իրենը չեն:

Զարմայրին բաժին հասած աշխատանքը, որտեղ դժուար է ինքնուրոյնութեան մասին խօսելը, նրա մեջ ձեւաւորել է կարծրատիպերին ենթակայ, մտքի ճկունութիւնից գուրկ մարդուն, որ միշտ դրսից եկող ուժի, օգնութեան կարիքն ունի:

**Մանգաղը ձեռքին կանգնել է Իշխանը եղբօր կողքին ու թւում է՝ արտաքուստ հանգիստ է:**

«Վերջացրիր պրծա՞՞ր, կնեազ Նիկոլ:

Նա կանգնել էր եղրօր զիսավերեւը, մանգաղը ձեռքին, եւ արտաքինից դատելով՝ հանգիստ էր, անտարբեր էր:

- Չէ, ես ուրիշ բան չեմ ասում, վերջացրի՞ր ասում եմ: Դեռ կարող ես, շարունակի՞ր, - եւ աչքով ցոյց է տալիս եղրօրը, - ասում եմ դեռ չի սատկել, շարունակի՞ր:

Եւ ուրով շոտ է տալիս փորի ընկած Զարմոյին:

«Ծան երևս ունի, չի սատկել» (48):

Իշխանը դիտմամբ է ծայրայեղացնում եղրօրն ուղղուած որակումները, որպէսզի ցոյց տայ կնեազի՝ հասարակական աստիճանասանդուղքի վերին մասում գտնուող Նիկոլի եւ դրա ստորին մասում եղողի միջեւ եղած «տարբերութիւնը»: Այսինքն այն, ինչ ձեւաւորել է ընթացիկ բարոյականութիւնը: Իսկ բնութիւնն այս ամէնի հետ որեւէ կապ չունի, մարդու գոյատեման ընթացքը ուժեղի բարոյականութեան ընթացք է: Կնեազ Նիկոլը պարտաւոր էր ծեծի հետեւանքները հաշուի առնել, իսկ եթէ դա չի արել, ապա մեղաւորն ինքն է եւ ոչ վրէժի ծարաւով լեցուն իշխանը: Վերջինս հարկադրում է ընդունել կամաւոր ինքնապանութիւնը:

«- Թոփի:

Կնեազը չի հասկացել:

«Աղաս է՞ շ է, թէ խոլ: Թոփի» (49):

Կնեազը չի հասկացել նրա խօսքը, ինչպէս որ քիչ առաջ Զարմօն չէր հասկացել Նիկոլի խօսքը, միայն այն տարբերութեամբ, որ բատրակը մի քիչ ծանր էր լսում ու նաեւ ուշ էր հասկանում: Բայց սրանք բոլորն էլ ի վնաս կնեազի են, եթէ նա չի հասկանում դիմացինի բնական թերութիւնները, ապա իշխանի վիրաւորական բնորոշումները կնեազի կապակցութեամբ տեղին են, եւ «համահարթում» են վերեւի ու ներքեւի տարբերութիւնը: Իհարկէ մարդիկ աւելի շատ զարմացած էին ոչ թէ այն բանի վրայ, որ եղան ուժ ունեցողին ժայռից գլորել էր ներքեւ, այլ որ սպանուողը «կնեազ» էր եւ կեանքով էլ վճարել էր բատրակին ծեծելու համար:

«Զդային նոպան, բերանի փրփուրը, լայնացած բիբերի թրթողը չէր անցել, երբ իշխանը յոգնած բարձրացաւ Զարմայրի նօտ, եւ յետոյ մինչեւ երեկոյ, մինչեւ տնից փախչելը:

- Մանգաղը ձեռքին՝ քեզ ծեծե՞ն: Մանգաղն ինչի համար է, ոչ խար:

- Եւ իրօք էլ անհնար է մանգաղով մարդ սպանելը, - Ժպտում է Զարմայրը: - Դժուար չէ, կը սպանի, բայց մարդու խելքը չի հասնում: Հրացան լինի՝ գլուխող դեռ շմտածած, ձեռք կրակում է, դանակ լինի՝ թեզանից անկախ բացում ես, բայց մանգաղով՝ դժուար է, մարդու գլուխ չի մտնում» (49):

Այստեղ է, որ իրենց մտածողութեամբ, հոգերանութեամբ տարբերուում են եղբայրները: Հաստատակամութիւնը յամառութիւն չէ, համոզմունքներուում հաստատակամութիւնը ոչ թէ մտքի տրամարանութեանը ենթակայ հետեւողականութիւն է, այլ մտածողութեան հետեւողականութիւն: Այս պարագայում անհատը նպատակի իրականացման ճանապարհին յայտնուած խոչընդոտները յաղթահարում է մտքի ճկունութեամբ, նա ստեղծագործոքն է մօտենում երեւոյթներին կամ տուեալ իրադրութեանը: Իշխանն առանձնանում է հենց այս որա-

կով՝ մտածողութեան հետեւողականութեամբ, նպատակին ոչ-ընթացիկ, «անհաւանական» միջոցներով հասնելու հմտութեամբ։ Պաշտպանութեան սովորական միջոցները հասու են Զարմայրի մտքին, բայց նա անյուսալիօրէն ետ է մնում իշխանի՝ աւանդական կարծրատիպերից հեռու մտածողութիւնից։ Եթէ հարկը պահանջի, իշխանը մանգաղը զէնք է դարձնելու, նրա յանկարծահաս մտքի սրութիւնն անսպասելի է անգամ ուժեղ հակառակորդի համար։ Մտքի ճկունութիւնը, անելանելի իրադրութիւնից ելք գտնելու պատրաստակամութիւնը նրան առաւելութիւն են տալիս անկամ ու քնատ միջավայրի հանդէպ։ Միտքը մշտապէս արթուն վիճակում է։ Կնեազի սպանութիւնից յետոյ իր ժամանակաւոր փախուստով ամէն ինչ վերջացած չի համարում, գիտի, որ իր պատճառով անհանգստացնելու են եղրօրն ու կնոջը։ «Դաշնակ լիազօրն իմացաւ Տրապիզոն է՝ իմ ու կնոջ օծիքը բողեց» (49)։ Իրականում խարել էր։ Տրապիզոն մեկնող մէկին խնդրել էր այնտեղից նամակ գրել։ Դրանից յետոյ էլ չի հանդարտուում, նրան զայրացնում է ցեղի՝ բանող անասունի յամառութեամբ ապրելու անկամ ձգտումը։ Որդու՝ Ռոկանի ծնունդը ոչ այնքան ուրախացնում, որքան զայրացնում է նրան։ «Դեւոյեան նախիրը մի զիսով էլ է աւելանում», բոլորին ձեռ առաւ, կատաղեց, կնոջը ծեծեց ու զնաց» (50)։

Իշխանը թոյլ չի տայ իրեն հակառակուել, եթէ մանաւանդ խօսքը կնոջն է վերաբերում։ Նրան արարող, ստեղծող, տունը շէնացնող, ճարպիկ ու սուր միտք ունեցող երեխաներ բերող կին է պէտք։ Հետեւապէս չի կարողանում տանել կնոջ «կապրիզները», հօր՝ տաժանակրի տուն գնացած կնոջը ծեծով ետ է բերում, իսկ առժամանակ անց «կնոջն այնպէս էր խփել, որ արնով էր ընկել»։ Խօսքուկոուի ընթացքում կինը ձեռքը թուանքին էր գցել ու դրա համար էլ կեանքով էր վճարել։ Որպէսզի որրերը՝ Արաքսիան ու Ռոկանը, անտէր չմնային, ապսպրանք է ուղարկում, թէ «Զարմայր, այսպէս, այսպէս, լսել եմ, որ Զարինց մարդամեռ մի կին կայ, տղայ երեխան զրկին, զնա բեր՝ բող երեխւրին նայի...» (51)։

Իշխանը գործի մարդ է, մտածում է սրընթաց թափի, ընթացքի մէջ, ոչ յոզնել կայ, ոչ ետ նայել։ Նպատակն էլ մէկն է՝ այնպիսի սերունդ ու ապահով կեանք ստեղծել, որ ապագայի համար ինքը, նաեւ՝ յետնորդները վախ չունենան։

Դրա համար էլ մշտապէս մտքի ճիգի գործադրում, անընդհատ աշխատանք կար նրա համար թէ՝ անկայուն, թէ՝ խաղաղ ժամանակներում։ Եզներով իջաւ ձորը, քար էր կրում, ապակի էր գցում, մօտիկութիւն էր անում դաւգործկումի նախագահի հետ, փոխարինում էր աշխղեկներին, խորհուրդներ էր տալիս դաշաղին հետապնդող միլպետին, տեղեկացնում էր դաշաղին հետապնդման մասին, ամէն ինչ անում էր,

բայց միշտ հիանում էր տիկին Սոֆիով, որ մշտապէս այս կամ այն պաշտօնեալի ձեռքում էր մնում:

Չորում տուն սարքեց, տուեց վարձով, ժամանակին որսաց շշուկները. այս պետութիւնը չէր խրախուսում մասնաւորին, ուստի մնաց «մատնաքաշ» բաճկոնի մէջ, տրեխները հագին, եզներին հաւասար ձգելով:

Կնոջը չէր սիրում, առհասարակ կին չէր սիրում: Ամէն անդամ խօսքուկուի էր կամ ծեծ: Բայց տեսնելով, որ Քարինջ կամաց-կամաց յարութիւն են ստանում նրա հէրանք ու դրա մէջ իր հարստութեան մի մասը կար, ներքուստ յարգում էր կնոջը: Վերջինս ջոկողութիւն էր առում խորթ ու հալալ երեխաների միջեւ, իշխանի զայրոյթն այս առումով ոչինչ չէր փոխում, բայց տանում էր կնոջ գոյութիւնը կողքին, քանի որ նա հաւաքում, կուտակում էր այն, ինչ կարողանում էր: Մտքում յարգում էր կնոջը՝ ինչպէս գողն է գողին յարգում: Իրար կրծելով ու իրար յարգելով կողք կողքի ապրեցին էլի երեսուն տարի՝ մինչեւ իշխանի մահը:

\*\*\*

Վիպակի յետագայ ընթացքն իշխանի սերունդների մասին պատմութիւնն է: Բայց շատ բան առնչում է այս հերոսին կամ նրա բացակայ ներկայութեանը: Իշխանն է այն չափանիշը, որի հետ գիտակցաբար թէ անդիտակցաբար չափում են նրա յետնորդները: Դրանց միջեւ եղած մարդկային որակների տարբերութիւնն ակնյալու է: Եթէ իշխանը հանդէս էր գայիս ընաւորութեան անխախտ որակներով, որ կայունութեան վկայութիւն էր, ապա սերունդներն աչքի են ընկնում ընաւորութեան անկայունութեամբ: Վիպակի ներքին տրամարանութիւնը մարդկային կարծր տեսակի եւ փոփոխամիտ մարդկանց ներքին բախումի պատմութիւն է: Թէեւ վիպակում իրադարձութիւնները խիստ որոշակի ժամանակ են ներկայացնում, այսուհանդերձ գրողի մտահոգութեան առարկան մարդիկ են՝ իրենց հոգեբանութեամբ, բարոյական նկարագրով: Կարելի է ասել, որ մարդիկ են բովանդակաւորում ժամանակը: Դրանց մի մասը իւրացրել է գոյութեան կոռուի օրէնքները եւ ըստ այդմ էլ հիմքեր է ստեղծում իր տեսակի պահպանման համար (Իշխան, Քարնջեցի), մի մասը յարմարում է ստեղծուած կացութեանը (Զարմայր), իսկ միւսներն էլ աշխատում են իրենց պատկերին բերել աշխարհը (Արտաշ): Այս տեղաշարժերը, որ կատարուել են ոչ յօգուտ մարդու, նրա տեսակի պահպանման, լաւ հեռանկարներ չեն խոստանում:

Մարդը դարձել է թոյլ ու անկամ, աղէտալիօրէն քչանում է ուժեղ մարդկանց թիւը: Իշխանն ամէնից աւելի զայրանում է Դեւոյեան այն մարդկանց վրայ, ովքեր թուրակամ են ու ենթարկուող, ովքեր խմելը դարձրել են նպատակ: «Ախալը իրեն, է, իրեն, քո քեզի Ռոկանն է, որ քողնում է արադն իրեն խեղճացնի: Գիտե՞ս ինչ է արել. երկու լիտր

արադի վրայ զրագ է բոնել, թէ ձորից, քաղաքից, մինչեւ Զարի զլուս, զիտ, երկու փութ աղը կը տանի: «Ա տարել է: Բայց ի՞նչ էշութիւն» (63-4):

Իշխանը չի կարող տանել եւ խառը տարիների ընկերոջը՝ Սարգսին, կին արարածի հանդէպ դրսեւորած թուլութեան համար: Նա ժամանակին բաւականին միջոցներ էր հաւաքել, իսկ հիմա դռներին պտտւում է քսան թուերի ոչխարինին հագին: Նրա հարստութիւնը, ամուսնու մահից յետոյ, քամեց իշխանի քոյլը՝ Մարգարիտը, որ կանգնած է երկյարկանի տան պատշգամբում՝ գիւղի ամենալաւ այգին ոտքերի տակ: «Սարօ, ես են ժամանակ էլ ասում էի, որ քո տունը կինը կը քանդի: Դու կնկայ մեռած էիր» (60): Այդպէս էլ կար:

Սարգսի յետին թուով արդարացումները հաւատ չեն ներշնչում: Նա ոչինչ չունի, հետեւապէս մնալու է կէս ճանապարհին: Իսկ սրան հակառակ իշխանը գովում, ապա եւ օգնում է քրոջն այն փողերով, որոնց տեղն ինքն էլ չէր ուզում իմանալ: Քոյլը լաւ տուն ու տեղ ունէր, ուրեմն ճիշտը նա էր: Քեռին պատրաստ է քրոջ որդուն օգնել, թող չխեղճանայ, թող ուժեղ լինի: Ինքը մի գիւղի չափ աշխատել է, չարչարուել, թող արժանաւոր յետնորդները՝ տուեալ դէպքում քրոջ տղան, նեղութիւն չքաշի, չխեղճանայ:

«Կեանը, միայն կեանը պէտք է հանդէս գայ որպէս բարոյականութեան չափանիշ»՝ հաւաստում էր Նիցչէն<sup>6</sup>: Բարին եւ չարը միմեանցից հարկ է տարրերել նրանով, թէ ինչպէս են դրանք ծառայում կեանքին: Եթէ դրանք խոչընդոտում են կեանքի ընթացքին, ապա պէտք է հրաժարուել դրանցից: Դարերով ծեւաւորուած բարոյական պատկերացումներն ու չափանիշները նոր իրադրութեան մէջ կորցնում են իրենց արժէքը: Ու եթէ այս ամէնն ըմբռնելի է, ապա անհրաժեշտ է նոր դիրքորոշում, նորովի պէտք է նայել բարոյական արժէքներին, որոնցով ապրում է մարզը: «Սիրի՛ր մերձաւորիդ» պատգամը փիլիսոփայի համոզմամբ ծնունդ է վախի: Սիրում են, քանի որ վախենում են:

Իշխանի բնաւորութեան կայացման ընթացքի մէջ կարեւոր տեղ ունի «Սիրի՛ր մերձաւորիդ» պատգամի նիցչէական իմաստաւորումը: Իշխանի հանդէպ դրսեւորուող յարգանքն ու սէրը պայմանաւորուած են նրա հանդէպ ունեցած վախով: Իշխանը չի սիրում, քանի որ վախենալու պատճառ չունի: Նրա սէրը դրսեւորում է միայն մէկ անգամ՝ կապուած որդու հետ, այն հիմնուած է այն զգացողութեան, հաւատի վրայ, որ այս որդին միանգամայն տարրեր է լինելու մնացածներից:

Իշխանը չի սիրում մերձաւորներին, թէեւ քրիստոնեայ է, չի սիրում խեղճերին, որոնք չգիտեն՝ ինչ անել: «Ծշխանը խեղճերին չէր սիրում, մանաւանդ եթէ նա Դնույնան էր լինում» (57):

Վարդանին 1941ի աշնանը բանակ էին տանում: «Իսկ նա խե՞ դ, սիրու փափուկ երեխայ էր» (57): Թէեւ նշանուած էր, երեք տարի էլ

վարսաւիրանոցում էր աշխատում, բայց էլի երեխայ էր մնացել: Կայարանում Ռոկանից պոկ չէր գալիս, վախը նրա մէջ այնքան էր, որ դա թաքցնելու ոչ հնարը, ոչ էլ ցանկութիւնը ունէր. «Ծխանին ասա՝ ինձ ազատի» (57): Նա վախենում էր հօրն այդ մասին ասել: Իշխանը փողով մարդ էր ազատում բանակից: Խոկ այստեղ, որդուն պատերազմ ճանապարհելիս, ինքը ներկայ չէր: Քարնջեցու ասելով այստեղ-այնտեղ խոտ էր հաւաքում. «Անձրեւ է զալու, այտա, կը թրջուեն» (57):

Կեանքն իր հունով էր գնում. նա «դատարկ» բաների վրայ ժամանակ չունէր ծախսելու, ապրել էր պէտք: Նա այդ որդու հետ որեւէ յոյս չէր կապում, սկզբից եւեթ խաչ էր քաշել նրա վրայ: Ումն ուզում է՝ թող լինի, միայն թէ դա չինի իշխանինը: Վարդանի անկամ ու վախուորած ընաւորութիւնը երկար ճանապարհ կտրելու զօրութիւնը չունէր, նա հենց կայարանում էլ գնացքի տակ է ընկնում:

Գուցէ Հայկազն ինչ-որ կերպ հօրը քաշէր, բայց սա էլ չունէր հօր՝ ինքն իրեն տիրապետելու, իրեն զսպելու երկաթէ կամքը: Ժամապահ Հայկազն սպանում է գնդի հրամանատարին, քանի որ վերջինս չէր պատասխանել «ո՞վ է» հարցումին: Մինչ կը հաւաքուէին, Հայկազն սպանում է ինքն իրեն:

Ռոկանին ու Արտաշին էր վիճակուած նոր ժամանակներում պահել Դեւոյեան տոհմի լինելութեան իրաւունքը:

Իշխանացուներն առաւել անկայուն, հետեւապէս եւ անկանխատեսելի մարդիկ էին, որ նորանոր հոգերանական վերափոխումներ էին ապրելու յետագայթը:

Յատկանշական է Ռոկանի բնութագրականը. «Որոյներից Ռոկանը դարձաւ անսահման բարի՝ երբ թէկուզ յիսուն գրամ խմել է, անտանելի՝ երբ չի խմել, անխնայ աշխատող, անխնայ ծախսող, երբեմն՝ բոի, նաև՝ դատող, այնպէս խոր դատող՝ որ կը շշմես, այնպէս ճիշտ ու տխուր դատող՝ որ կատաղութիւնից լացդ կը զայ, նաև՝ ջրիկ, ծանծաղ, զահլատա՝ ը» (55):

Ռոկանը որքան էլ մարդասէր ու արդարամիտ, թոյլ բնաւորութիւն ունի, քանի որ ենթակայ է խմիչքին: Բայց նրա ողբերգութիւնը այն է որ յաճախ է «դառնում» խելօք, քան միւսները: Նրան անհանգստացնում է ամէն բան, քանի որ հոգին բաւականաչափ խոցելի է կեանքի եւ լաւ, եւ վատ երեւոյթների հանդէպ, լաւ բան է տեսնում՝ խմում է, վատն է տեսնում՝ խմում է: Եթէ օրն անցնում է առանց լաւ ու վատ բանի, ուրեմն կարելի է խմել՝ օրուայ դատարկութիւնը մոռանալու համար: Ոչ ոք նրան չի հասկանում, ընտանիքն էլ չի հասկանում. «Այ ծածկիր, եղ վերմակն ափսու է դրան, բող շան պէս սատկի...,- մօրն ասում է Դեւոն՝ որդին» (56):

Ռոկանը նաեւ համարձակ էր: Ռւկրախնական փոքրիկ քաղաքում Հայկազին թաղելուց յետոյ իշխանին անցողակի սպառնում է. «Ես թեզ

Նանայի կամորջից կը կախեմ» (56): Նրա մէջ խօսում էր հօր նկատմամբ ունեցած արհամարհանքն ու ներքին զայրոյթը. նա կարող էր եղրօրն ազատել բանակից, բայց այդ չէր արել, ու հիմա Ոսկանի լիշողութեան մէջ եղրօր գերեզմանն էր ու լեհական պոլոնէզը, որի հնչիւնների տակ թաղել էր եղրօրը:

Ոսկանը նման ձեւով, միայն մէկ անգամ է սպառնացել Արտաշին՝ կցելով «լակոտ» բառը Արտաշը նրան դուր չէր գալիս մանր ու մեծ գողութիւնների համար. նա պատրաստ էր գրկել վերջին խեղճին անգամ:

Կամսարին բանակից քարնջեցին ազատեց: Նա իշխանի արեան կրողը չէր ոչ միայն այն պատճառով, որ խորթ էր: Արդէն նշանուած՝ իրի կունները մէնակ դուրս չէր դնում: Միայն փայտ էր սղոցում, ուրիշ բաներից վախենում էր այնպէս՝ ինչպէս տասնհինգ տարեկանում սագերից, էշ բառնալուց, իշխանի ստուերից, եօթ տարեկան Արտաշի բռնած լորտուից, քերծած մատից, կանանց հետ կուռելիս, թէ առհասարակ կոռուից՝ «Չան կոյի լիներ դա, ձիու, ցույի, թէ խոզի» (58): Միայն աքլորի կոիւ էր նայում, դրա մէջ վտանգ չկար: Ժամերով սիրում էր սղոցարանում քաշած տախտակները նայել, ամէն չափսի տախտակ քաշում էր, միայն թէ «չափրասոր պիտի ուրիշն աներ» (58): Մինչ կտրուած մատով կամսարի երեսին ջուր շաղ կը տային, «մեռաւ տնարանդը»:

Իշխանը մերժում էր կեցութեան այս ձեւը, բնաւորութեան այս տեսակը, ուստի որակումները խիստ էին. «Հայ յ քո ստեղծողի հերն եմ անիծել» (59): Իշխանը համոզուած է, որ այն որակները, որ ունի մարդը, պայմանակուած են ծնունդով, արեամբ: Նա ի՞ր արեան, ի՞ր տեսակի կողմնակիցն է: Ուրախ է, որ նեարդային դողն իրենից անցել է քրոջն ու աղջկան, որ օրնիբուն աշխատում են շատացնել իրենց ունեցածը, հետեւապէս եւ ապահով պայմաններ են ստեղծում իրենց սերունդների համար: Ուստիեւ պատահական չէ քրոջն արուած դիտողութիւնը. «Մարգարիտ, կեանքում կարող է ես շատ սխալ եմ արել, բայց ամենամեծ սխալս թեզ Ակոփին տալն էր: Չպիտի տուած լինելի: Տալոց յետոյ ել գոնէ նրանից չպիտի ժառանգ ունենայիր, արինը դուրս է գցում, չի կորչում...» (61): Իշխանը նկատի ունէր քրոջ՝ տասնհինգ տարեկան որդուն, որ անտառում շուր էր տուել էշի բեռը եւ լաց էր լինում. «Լաց եղիր, լաւ լաց եղիր, որ բեռը սարքոի... Հայ խոր գնա Ակոփը, խո՞ր...» (61):

Նա համոզուած է, որ մարդու մէջ ժառանգական արիւնը որոշում է ամէն ինչ: Մահացու դէպքից քիչ անց՝ նկատելով Զարմայրի շփոթուած հայեացքն ու կապը քանդելու անզօր փոձերը, դառը ծիծաղում է. «... Վայ խոր գնա թեզօն, խո՞ր...», իսկ մեռնելուց քիչ առաջ, նայելով եղրօրը, մէկ անգամ եւս հիմնաւորում է սեփական ճշմարտութիւնը.

«Ե՛, Զարմայր, Զարմայր, խեղճ ես, որ իմ ապրուստից մազ պոկողը չես. քարնջեցին քեզ կծած կորեկ ցոյց տուողը չի» (69):

Կորուստը Զարմայրի մէջ մեծացրեց Իշխան-լաւին, նրան, ով եղբօր կողքին էր ու առանց վարանելու ձորը գլորեց կնեազ Նիկոլին, այս Իշխանին, որ աշխատում էր օրնիբուն, ու նրա եռանդը որեւէ կերպ չէր պակասում: Իսկ երբ քսան տարի յետոյ Զարմայրը ծանր էր լսում, նրա համար թոշակ դասաւորեց: Իշխանից Ոսկանին երկու լուսանկար մնաց, ջահել տարիների եղբայրը: որ քարից մարդ էր շպրտում եւ պապ Իշխանը, որ կը կանգնի քարի տակ ու կը համոզի ներքեւ թոշել, քանի որ գետինը փափուկ է: Այս ամէնի հատ՝ նաեւ անունը: «Դեւոյեան Իշխանի տղան եմ», ասում էր, մինչդեռ իր անունով հիմա որդին պիտի պարծենալիս լինէր՝ Դեւոյեանը:

Բոլոր բարեկամները պարծենում էին Իշխանով, միայն Արտաշն էր ձեռ առնում հօրը: «Ապել էր իշի պոչից տնաշէնը» (72): Արտաշը նոր ժամանակների տիպն է, բայց միանգամայն այլ որակի: Փոխուել են մարդկային յարաբերութիւնները, փոխուել են եւ մարդիկ, նրանք դարձել են խորամանկ ու հաշուենկատ: Իշխանն անգամ վախենում էր Արտաշից, նրա մեծ նենգութիւնից: Ամէն անգամ նրա մասին մտածելիս միշտ Արտաշի կողքին տեսնում էր Զարմայրին, բայց նրանցից ոչ մէկը Իշխանի սրտովը չէր: «Մարդ շպէտը է լինի այնքան քաղցր՝ որ կու տան, էնքան դառը՝ որ քընն» (72): Բայց Արտաշն այնքան էր վատ, որ Իշխանն անդրադառնում էր իր իսկ հարցին ու պատասխանը պարզ էր: «Չե, այտա, ափսոս չ՝ Զարմայրը, դնում եմ շան կողրին» (72):

Արտաշն օրերով տուն չէր գալիս: Գնացքներում՝ Լենինականից Թիֆլիս, Թիֆլիսից Լենինական, գողանում էր, թափում էր, մութ վագոններում դանակով պատռում էր՝ մի բան թոցնելու յոյսով: Հայրը նրան զինկոմի ձեռքը տուեց, բայց նա յայտնուեց քսան-քսանհինգ օր յետոյ՝ լէյտենանտի հագուստով, զինուորական պահեստ էր կտրել, փաստաթղթեր կեղծել, ընկերացել էր զինկոմի լակոտին, նշանակուել էր ռազմագիտութեան դասատու: Իշխանը քաղաքի տները նրան տուեց, խնդրեց գիւղ չքարձրանալ: Ինչ յանցագործութիւն որ կատարւում էր, Արտաշի մատը խառն էր: Իշխանն այդ անառակի, անբանի, մարդասպանի անունը լսել չէր ուզում, բայց նա կար: Կին փոխելն ու խմելն այնքան վտանգաւոր չէին, ինչքան՝ մեծանալը, գնալով խելքովանում էր: Ինքն իրեն դարձնում էր հազարի մէջ կորած աննշան մարդ, որ դառնայ նաւթաբազայի հաշուետար, յետոյ էլ ոսկեղէնի խանութում վաճառող:

Մի օր էլ ոսկու խանութը սրբուած գտան: Արտաշն անյայտացել էր: Իշխանը հանգստացաւ. կամ կը բռնեն, կամ չի երեւայ: Բայց փոխուել էին ժամանակները, խանութի ոսկին ոչ մէկինն էլ չէր, պետութեանն էր: Հարցը փակեցին. խանութը թալանուել էր ոչ վարիչի, ոչ էլ չփախած աշխատողների կողմից: Մարդիկ էլ սկսեցին առեւտուր անել արդէն նոր

ստացուած ապրանքներով։ Իսկ երբ տարիներ անցան, Արտաշն էլ վերադաստիարակուածի լաւ օրինակ էր, միջավայրը պատրաստ էր գրկարաց ընդունել «անառակ որդուն»։ Հայրը զարմացած էր հասարակութեան կարճամտութեան, աւելորդ «մարդասիրութեան» չափի վրայ։ Արտաշն անգամ իր յանցանքի մէջ, ինքն իր համար չէր կարող ճշմարիտ լինել, նա իր «սկզբունքը» պահողը չէր։ Եթէ իշխանի սերունդը տէր էր իր գողի, աւազակի նկարագրին, ապա Արտաշը չունէր այդ ինքնասիրութիւնը։

Սարատակցի Դուրմիշը մտել էր երեսուներեքին գրասենեակ, կոտորել կուսքջիջը, փախել էր սարերը, զղացել ու լաց էր լինում։ Բայց տես, որ ժամանակին իշխանի «խելքը չհասաւ» խորհուրդ տալ նրան յանձնուել եւ ներողութիւն խնդրել, «ոջիլն սպանեց խեղճին» (77)։ Այդպէս էր, դաշաղը, որոշակի սկզբունքից ելնելով, մարդկանց զրկել է կեանքից եւ յետոյ էլ այդ ամէնի դիմաց վճարել է կեանքով։

Հիմա այլ ժամանակներ են։ Արտաշը շրջանի երեւակայութեան ծիրում տասնհինգ հազար մարդուց ջոկուում, առանձնանուում, դառնուում է մի մարդ, որ Եւրոպայում շրջագայել է Մանթառլեանի հետ։ Այդ երեւակայութիւնը չի տարանջատելու երկուսին, թէ մէկը շրջում է գողութեամբ, միւսը՝ ոչ։ Կարեւորն այն էր, որ երկուսն էլ «աշխարհ» էին տեսել։ Ստացուում է, որ գաւառական մտածողութիւնն էլ փորձում է կարգաւորել հասարակական կեանքը, որտեղ հարցերը տնավարի են լուծում։ Մինչդեռ մեղաւորը պիտի արժանի պատիժը կրի։ Եթէ մեղաւորի հանդէպ բարեացակամ է վերաբերմունքը, եթէ վատը չի պատժուում, ապա դրա օրինակը կարող է վարակիչ լինել։ Իշխանը չի ընդունում Զարմայրի ինքնավստահ հիմնաւորումը՝ «Փիմքը պիմդ է»։ «Ան՝ ծ երկիր է, սոցիալիզմ է» (79)։ Ի՞նչ պիտի անի մի Արտաշը, եթէ այստեղ կան բացթողումներ, ապա մի տեղ, երկրի մի անկիւնում հզօրանում է այդ սոցիալիզմը։ Իսկ իշխանի համար պարզ է, որ վերահսկողութեան այն ձեւերը, որ հասարակութեան զարգացումն ապահովող միջոցներ են, դարձել են այդ զարգացման կարեւոր խոշնդուտ։ «Ասուն եմ հրահանգիչն ինչ է, որ նրա ուորի տակ էլ ոչխար են մորքում» (79)։ Զեւաւորում է բիւրոկրատական դասը, որ իրեն իրաւունք է վերապահում օգտուել հասարակութեան ունեցուածքից, իսկ այդ ունեցուածքն արտադրողն էլ անմասն չէ համընդհանուր թալանից։ «Շարքայինը օղակավարին, օղակավարը բրիգադիրին, բրիգադիրը՝ նախազահին, նախազահը հողբաժնին, զնո՞ւմ է...» (79)։

Պարզւում է, որ մարքսիստներն այնուամենայնիւ ամբողջ խորութեամբ չէին արժեւորել հին աշխարհի աւանդոյթները, դժուար է մարդասիրութեամբ առաջնորդուել, իսկ առանձին դէպքերում էլ շատ բան մարդկանց խղճին թողնել։

Պետութեան կայացման առաջին հանգրուանում մարդիկ ջարդեցին կապիտալիզմը, քշեցին հարուստներին, ոչնչացրին դաշաղներին եւ մասնաւոր սեփականատիրական երկիրը փոխարինեցին ինչո՞վ...

Յաճախ է խօսւում թէ աղճատուեց սոցիալիզմը: Մինչդեռ կէս դար առաջ Մաթեւոսեանը ճգրիտ բնորոշում էր իրավիճակը: «Լա! կեանք էր սկսում՝ մի տեղ շիմացաւ, կոտրուեց» (78): ասում է Իշխանը: Խօսքը երեք էլ եղած երեւոյթի աղճատման ընթացքի մասին չէ: Այն իրականում չի էլ եղել, դա միայն սկիզբն էր այն իդէալների, որոնց ձգտում էին մարդիկ: Չեւաւորուեց «զօրանոցային սոցիալիզմը», որ շահագործման նորանոր ձեւեր էր ենթադրում: Պետութիւնն էլ դառնում է «ամենամեծ կապիտալիստը»: Պետութիւնն է սեփականատէրը. Արտաշի թալանած ուկու խանութը որոշակի մէկինը չէր, որ «աղադակէր, բողոքէր, հատուցում պահանջէր, բռնել տար գողին» (75): Դա նոյնն էր, ինչպէս որ ակտաւորում են ավելի պահեստներին հեղեղի պատճառած լնասը: «Ոչ ոք չի ունում ցեխ դարձած ալիւրի վրայ. ոչ ոք իրենը չի համարում ալիւրը» (75):

Նախապէս պետութիւնը հասարակութիւնից եւ նրա անունով վերցնում է աշխատանքի միջոցները, բայց գաղափարախօսութեան տեսաբաններն անհրաժեշտ չեն համարում յատակօրէն մշակել այն ձեւերն ու միջոցները, որոնց օգնութեամբ արտադրութեան միջոցները պիտի վերադարձուէին հասարակութեանը: Երկրի նոր տէրերը հապճեպօրէն իրագործում են խնդրի առաջին մասը՝ առկախ թողնելով երկրորդ եւ կարեւոր մասը:

Չեւաւորում է կուսակցական-բիւրոկրատական դասը, որ ձեռքում կենտրոնացնում է պետական-վարչարարական, կառավարման համակարգը եւ օգտուելով դեռեւս չամրապնդուած, չզարգացած երկրի տնտեսութեան բացթողումներից, արտադրութեան մեծածաւալ լարիրինթոսում սկսում է սեփական շահը ֆնտուել: Պետական մակարդակով այդ խաւը կատարում էր երկրի «սեփականատիրոջ դեր», իսկ իրականում վատ վերահսկող էր՝ իր շատ որոշակի նկրտումներով: «Պիտի բոլորի՞ն դատեն, որ տեսնես: Իսկ Մանրաղեանդ ինչ է, որ տեղ գնում է՝ ոչխար են մորքում: Ինչի՞ն մորքում: Որովհետեւ իրենց համար մորքել են, բուիք են անում: Իսկ ինչ է հրահանգիչը: Ասում են հրահանգիչն ինչ է, որ նրա ուորի տակ էլ ոչխար են մորքում» (79):

Գրողն իր կերտած բնաւորութիւնների մէջ սոցիալական հարցադրումները գերակայ խնդիր չի համարում: Նրա հերոսը՝ Իշխանը, երբեք էլ համոզուած չէ, որ ժողովրդի գոյատեւումը պայմանաւորուած է նոր տնտեսավարման համակարգով: Նրա համար կարեւոր չեն գաղափարական վերացարկուած համոզմունքները: Նա, որքանով որ սեփական կենսափորձն է հնարաւորութիւն տուել, հասկացել է շատ կարեւոր բան: Անհնար է պետութիւն կայացնել, բարոյական միջոցներ գործի

դնելով, եթէ այդ պետութեան դէմ պայքարում են անբարոյական միջոցներով։ Ընդհանրապէս իշխանը չի գործածում «բարոյականութիւն» բառը։ Նա դրա մասին խօսելու, առաւել եւս մտորելու ոչ ժամանակ, ոչ էլ ցանկութիւն ունի։ Նա համոզուած է, որ մարդիկ բնոյթով չար են։ Անկասկած նա լսել է, որ լաւն ու բարին պաշտպանելը մարդուն ապրերում է կենդանուց, նրան բնութիւնից «միեր» է տանում։ Զէ՞ որ նա տիրացու թեգոյի որդին է։ Բայց ինչպէս Նիցչն է համոզուած՝ գուցէ երբեք էլ անհրաժեշտ չէ՝ բնութեան վրայ իշխել, գուցէ աւելի կարեւոր է զնալ նրա ետեւից... Ռ' ում է պէտք այն բարութիւնը, որի ետեւում թուլութիւնն է պահւում, իսկ հեղութեան թիկունքում՝ վախկոտութիւնը։

Իշխանը յիշում է 1919 թիւը, երբ որոշում էր երկրի լինել շինելու հարցը։ Նրա բերած օրինակը մէկ անգամ եւս վկայում է, որ իշխանի գիտակցութեան մէջ կապակցուում է երեւյթների ընդհանուր ընթացքը, նա չի առնչուում սոցիալիզմի գաղափարական վարդապետութիւններին, որտեղ միայն մի սկիզբ կայ՝ յեղափոխութիւն։ Նրա համար կարեւոր չէ ինչ հասարակարգ է։ Կարեւոր է, որ այն աշխատելու, լաւ ապրելու հնարաւորութիւն տայ մարդուն, կարեւորը ապրելու համար լաւ պայմաններ ստեղծելն է։

Զարին չարութեամբ պատասխանելու անհրաժեշտութիւնը նա զգացել է տասնամեակներ առաջ։ Ղարսը պաշտպանելու մտադրութեամբ ընկերոջ հետ հասնում է Ալեքպու։

«Ժուրուրը քաղաք է մտնելու, իսկ ժողովուրդը վրայ է ընկել զինուրական պահեստին։ Միջնանոցին նայե՞լ ես. մրջնանոց է, խառնուած։ Կոցում են, կարողանում են՝ շալակում են, չեն կարողանում՝ ուրիշ են կոցում, դա ել ծանր եղաւ՝ քարշ են տալիս» (80). Ամէն ինչ տակնու-վրայ է եղած։ Մարդիկ պարզապէս գագաններ են՝ տրորում են, ջարդում են, փախցնում են, ամէն մէկը իր ունեցածն ու իր գլուխն ազատելու մասին է մտածում։ Մայրայիդ իրավիճակներում ի յայտ են գալիս մարդկային մթին բնազդները։

Իշխանը չի կարողանում մոռանալ բարակ-մարակ, քսան-քսանհինգ տարեկան պորուչիկի աստիճանով զինուրդին, որ կախում էր սրա-նրա փէշից, լաց էր լինում։ «Եղբայրնե՞ր, հայեր, ինչ էք անում, ամօք է, հայրենի՞ քը, բռ՞ լրը... եղբայրնե՞ր, հայ եղէք։ Հայ են էին, բա ինչ են, ին նասրանի՞ չեն։ Քշում են ամէնքն իրենց համար» (80).

Պորուչիկը դուրս է գալիս ճանապարհից, կրակում է իր սրտին. ոչ ոք չի խանդարում նրան, մէկը մօտենում, վերցնում է նագանը՝ «սիրուն բան էր», ու հեռանում (80)։

Ակնյայտ է, որ նման սահմանագծային իրադրութեան մէջ ի յայտ եկող բնազդները որեւէ կերպ «ազգային նկարագիր» չունեն։ Մարդու մէջ արթնացել է դազանը, իսկ այն սանձահարելուն ուղղուած մարդ-

կանց խղճին, իմաստութեանը, պատուին դիմելու անզօր ճիգերը միայն ծիծաղելի են:

Մարդկային վարքագծում Մաքիաւելին առանձնացնում է երկու կարեւոր որակներ՝ սեփականատիրական, կուտակման տենչը եւ արժանապատութեան զգացումը<sup>7</sup>: Այս որակները կան ինչպէս անհատի, այնպէս էլ մասսաների վարքագծում: Վերջին պարագայում սեփականատիրական բնազդը գերակշիռ դեր ունի պատուի հանդէպ:

Թուրքի մօտալուտ յարձակման սարսափը համակել է բոլորին, ոչ ոք դիմադրելու, երկիրը փրկելու մասին չի մտածում, նրանց համակել է վերջին պահին ինչ-որ բան գջլելու, սեփականելու մարմաջը: Ո՞րն է ելքը ստեղծուած կացութեան մէջ, երբ դրուած է լինել-շինելու խնդիրը: Մաքիաւելին այստեղ եւս հեռու է կեղծ բարոյախօսութիւնից: Երբ նժարին է դրուած հայրենիքի փրկութիւնը, այն չեն կշռում արդարութեան կամ անարդարութեան մասին դատողութիւններով, գթասրտութեամբ կամ դաժանութեամբ, գովարանութեամբ կամ խայտառակութեամբ, ընդհակառակը՝ նախընտրելին այն գործելակերպն է, որը կը փրկի նրա կեանքը եւ կը պահպանի ազատութիւնը<sup>8</sup>:

Մաթեւոսեանական հերոսը եւս յստակ պատասխան ունի, որ հեռու է բարոյականութիւնից, բայց միակ ճիշտ ելքն է ստեղծուած կացութիւնից դուրս գալու համար: Պորուշիկի սիսալն այն էր, որ լաց լինելու փոխարէն պիտի հայնոյէր, ոչ թէ իր սրտին, այլ թիկունքով տղամարդու աչքին կրակէր: «Պիտի դէմ անէր նազանը նրա աչքին ու հրամայէր. «Ե՛տ դարձ, ես քո մէրը», ու եթէ սա մի բոպէ չեղիա օրօրուէր՝ պիտի դատարկէր նազանը սրա աշքին» (80):

Այսպէս է մտածում Իշխանը, չարին հարկ է պատասխանել չարութեամբ՝ միանգամից, առանց վարանելու, հակառակ դէպքում այն տարածուելու է եւ ապականելու է ամէն ինչ: Նա իր կեանքում չարը պատժելու յստակ պատրաստակամութիւն ուրիշների մօտ տեսել է միայն երեք անգամ. մին՝ բրիգադիրի դատը կարտոֆիլի գործով, միւսը Անդրանիկն էր, որ զօրախումը շարել էր մի գծի եւ նրանց միջից յայտնաբերելու էր մեղաւորին, որ թրատուեց բոլորի աչքի առաջ: Երրորդն իր մեծ թոռն է՝ անարդարութիւնը կուլ չտուողը: «Արտաշի անունը լսելիս այնպէս է սեղմում ատամները, որ նոում են» (81): Իսկ Զարմայրը համաձայն չէ եղբօր հետ, նա հաւատում է «թերթում գրուածին»: Իշխանը զարմացած է մարդկային մտքի բթութիւնից: Զարմոյի նմանները ճիգ չեն գործադրում հասկանալու երեւոյթների ընթացքը, քանի որ չեն վստահում իրենք իրենց, հետեւաբար եւ չեն կարողանում իրենց պարտադրուած կարծիքը փոխել, նրանք աւելի հաւատում են գաղափարին, քան՝ իրականութեանը: Նրանք «կարճատես» են, դժուարանում են տեսնել այն լաւը, ինչը կարող է գալ: Նրանց տեսածն ու ապրածը՝ անճիգ ու

սովորական, մի տեսակ բուսական կեանքով, ոչ այնքան կարելցանք, որքան հեգնանք է առաջացնում:

Ի յայտ են եկել նոր մարդիկ, իսկ կեանքի մասին պատկերացումները մնացել են նոյնը՝ հասարակական սեփականութիւնը հսկում է պետութեան կողմից: Բայց երկիրը կառուցողները նկատի չեն առել մարդու բնոյթը, նրա շահամոլական անյագուրդ ծարաւը, կուտակելու մարմազը: Օրինակ, եթէ զոկ Գոդին բուժետապան է, ապա դա չի նշանակում, թէ ցածր է շրջկոմի քարտուղարից: Իշխանը զարմանում է, որ քարտուղար Մանթառլեանի կինը գուլպայ էր կարկատում... Բայց դա զոկի պէ՞տքն է, նրա հախից գուլպայ կարկատելո՞վ կը գաս: Այսինքն եթէ քարտուղարը այնքան արդար է ապրում, որ կինը պոկուած գուլպաներ է գործում, նա այս ճանապարհով կը կարողանա՞յ գող բուժետապանի ճանապարհը կտրել: Նա իր գործին է ու ծիծաղում է ե՛ւ մի նիստրի, ե՛ւ պրոֆեսորի, ե՛ւ ուսումի ու ամէն ինչի վրայ: Նրանք իրենցից ու իրենց գործից դուրս այլ նպատակ չունեն: Զոկի համար ծիծաղելի են նրանց ջանքերը, ովքեր փորձում են ղեկավարել այդ մեծ ընթացքը: Աստիճանաբար ձեւաւորուող քրէական տարրը անողոք է նրանց հանդէպ, ովքեր երկրի զարգացման ընթացքը տանում են ո՛չ իրենց ցանկացած ուղիով: Ու եթէ զոկ Գոդին նմաններն են տնօրինում մարդկանց աշխատանքը, ապա ափսոս չէ՞ Իշխանն իր ծանր ապրումների համար, որ ունեցել է ստացած լուրի կապակցութեամբ: Լսել է, որ Միկոյեանի ինքնաթիռում ուումբ են տեղադրել ու քիչ էր մնացել, որ Անաստասը զոհուէր: Իշխանը լաց է եղել նրա համար: Հասկացել է, որ խիստ դժուար է այստեղ՝ վերեւում Անաստասի համար: Իսկ զոկի համար ի՞նչ, թէ ով է ղեկավարը եւ ինչ է ասում կամ պահանջում: Եթէ այդպէս է՝ անուս Գոդին է այսօրուայ ու գուցէ եւ վաղուայ տէրը, ուստի եւ Իշխանը վատ է զգում, ափսոսում է իր յանկարծահաս թուլութեան համար, քանի որ նման քաղաքականութեամբ որեւէ բանի չես հասնի:

Այդ օրը նա կացնով սպանում է էշերից մէկին, միւսին ծեծում է սպանելու չափ՝ առանց առիթի: Վիրաւորում է Դեւոյեան մի տրակտորիստի («զեաղա»), որ մեծ ուժ ունէր ու նաեւ՝ շքանշան, բայց տկլոր էր: Նա տոհմակցուն վիրաւորում է, քանի որ խարուած էր պետութեան կողմից: Նրա ուժն ըստ ամենայնի օգտագործւում էր, բայց դրա տէրը միշտ տկլոր էր:

Իշխանը վերջում հասկանում է, որ խարուած է նաեւ ինքը: Նա հաւատացել էր այն շշուկներին, որ այս իշխանութիւնը չի խրախուսում մասնաւորին, ուրեմն մեծ տուն կառուցելու անհրաժեշտութիւն չկայ: Իսկ հիմա, զոկի տներն ու մեքենաները տեսնելով, համոզւմ է, որ իրեն չարաչար խարել են: Չէ՞ որ ինքն այդ ամէնն ստեղծելու էր չարքաշ աշխատանքի միջոցով, մինչդեռ հարկադրուած զսպել էր եռանդը, ուժը

եւ մնացել «մատնաքաշ» բաճկոնի մէջ։ Ու թէեւ ամէն ինչ կորած չէր համարում, նրա եռանդը կը բաւականացնէր տներն ընդարձակելու համար, բայց արդէն ուշ էր, նա եղբօր հետ իջաւ քար հանելու եւ ընկաւ փլուածքի տակ։

\*

Վիպակի երկրորդ մասը նուիրուած է Արտաշի ժամանակին։ Դեռյեան տոհմը շատացել ու մանրացել է, նրանք դարձել են խիստ հաշուենկատ, թուլակամ, կնամոր։ Հիմա սրանք վտառի են նման՝ ամէն ինչ ընդգրկող։ Եթէ մի ժամանակ Զարմայրը հաւատացած էր, որ մի Արտաշն անդամ եթէ կրակ դառնայ, ոչինչ չի կարող անել, ապա հիմա ակնյայտ է, որ նա դարձել է ուշալ ուժ, նրան խնդրում են, որպէսզի զոկին ձերբակալել տայ։ Հասարակական կեանքում անկումը կատարեալ է։

Բնաւորութիւնները գերազանցապէս կառուցուած են հակադրութիւնների հիմքի վրայ։ Ուժեղ, ուղղամիտ, երկաթէ կամքի տէր Իշխան եւ Փիզիկապէս թոլլ, հիւանդոտ, խորամանկ, կնահաճ Արտաշ։ Եթէ առաջինը հարստութիւնը դիզել է չարքաշ աշխատանքով, ապա երկրորդը՝ խարէութեամբ։ Եթէ Իշխանի կոպտութեան մեջ աւելի մարդասիրութիւն կար, ապա Արտաշի սիրոյ մէջ՝ հաշիւ։ Եթէ Իշխանն իր երեխաների հետ պահում է եւ ուրիշի որբին, ապա Արտաշը ընդունակ չէ իր մօտ պահել անդամ զաւակին։ Եթէ Իշխանը չէր սիրում կանանց, ապա Արտաշը համոզուած է, որ աշխարհը «մարդուկնիկ» է։

Իշխանի մահից յիտոյ Արտաշը Ռուսաստանից վերադարձաւ ընտանիքով։ Տան անդամները օտարահունչ անուններ ունէին՝ Դուսիա, Վուգա, Իդչկա եւ ինքը՝ Արտաշ Իշխանիչը։ Աղյավարի հագնուած, փողկապով ու կարգին քորոցով։ Այնպիսի կարգին շարժուձեւ ունէր, որ թւում էր՝ ֆրանսիական համալսարանների պրոֆեսոր է, եկել է վանքերն ու կամուրջը տեսնելու։

Իրականում այս ամէնը երեւութական էր, ներքին դատարկութիւնը թաքցնելու համար արուած ցուցադրութիւն։ Ցուցադրական էին եւ նրա խորհուրդներն ընտանիքի անդամներին՝ մերձաւորներին սիրելու եւ յարգելու պահանջներով։ Եթէ Իշխանի սիրոյ մէջ որեւէ յիտին միտք չկար, զայրոյթն էլ կապուած էր Դեւոյիան տոհմի թուլութեան, խեղճութեան հետ, ապա Արտաշի սէրը կեղծ ու փալնքոտ էր, նպատակը՝ փառասիրութիւնը։ Իշխանը թւում էր այն, ինչ կար, Արտաշը էութիւնը կոծկելով է զբաղուած։ Նա այն չէ, ինչ թւում է իրականում։ Նպատակն էլ բացառապէս ինքն է, իր ներկան, «վաղուայ օրը մերը չէ», մարդը ծաղիկ չի, որ ամէն գարուն ծաղիկի։

Իշխանը ապրել չմեռնելու համար թողել էր եւ լաւ ապրուստ, եւ ապրել չմեռնելու ջղեր։ Քարնջեցին երեխաներին էր պահելու, ինքն ու կինն աշխատելու էին։ Թերուսի նրա էութիւնը համալսարանը դի-

տում էր մի վայր, ուր քչերն են հասնում։ Ուսումը պէտք էր՝ հասարակական ունեցուածքից շատ ու հեշտ վերցնելու համար։ Դրա համար էլ դիպլոմով կինը նրան «փափախ» էր թւում։ Կնոջը նշանակել տուեց ֆիզմաթի դասատու, ինքը տեղաւորուեց խաղալիքների խանութում՝ օրը տասը ռուբլի աշխատավարձով։ Նրա գողութիւնն ի՞նչ էր որ միւսների թարանի կողքին։ «Մնար ձեր ապարանքների մօտ աղմուկ չենք բարձրացնում, դուք ել մեր բնակարանների հետ գործ չունեք։ Ձեր Մոսկուան ու Փարիզը ձեզ լինեն, իսկ ձորի այս քաղաքը մեզ եռլա կը տանի» (89)։

Արտաշի համար ի՞նչ էր հայրը. կանգնում էր կամուրջին՝ երեւացող պաշտօնեայի բեռը կարճ ճանապարհով վերեւ տանելու համար, որ անասունների հաշուառման ժամանակ նրա անուան դիմաց գծեր լինէին։ «Դշխանը մեծ պոչ էր, բայց պոչ էր»։ Այս բնորոշումը, որ ասւում էր Արտաշի կողմից՝ հօր թերութիւնը ցոյց տալու համար, իրականում ընդգծում էր նրա առաւելութիւնը։ Իշխանը գիտէր հասարակական կեանքում իր գրաւած տեղն ու դիրքը. սահման կար, որից այն կողմ իրեն իրաւասու չէր համարում։

Արտաշի ժամանակը՝ քառսային անտէրութեամբ ու կարծեցեալ վերահսկողութեամբ ձեւաւորել է նոր յարաբերութիւններ, որտեղ «փողային հիմքի» վրայ ստեղծում է հասարակութեան ստորակարգութեան սանդուղքը։ «Տրեստի» ներկայացուցչի շուրջ պտտուող զոկն Արտաշի համար կարեւոր բացայացում արաւ։ Թէեւ «տրեստ»ի ներկայացուցիչը աւելի մեծ հնարաւորութիւնների տէր էր, բայց ապահովութիւնը զոկինն էր, առանձին դէպքերում նրանք հաւասարւում էին, իսկ երբեմն էլ զոկը գառնում էր սիրալիր-հպարտ, ներկայացուցիչը՝ շուրջը պտտուող։ «Ինչ-որ տեղ ձեռնածութիւն է լինում. պոչը դառնում է գլուխ, գլուխը՝ պոչ» (86)։

Սա իրականում ստեղծում է բոլորովին նոր իրավիճակ։ Հասարակութեանը ծառայողները դառնում են տէրեր։ Պետութիւնը՝ որպէս որոշակի մարդկանցով ձեւաւորուած կառոյց, դառնում է հասարակութեան հաշուին ապրող կառոյց։ Պետութիւնը չի ծառայում հասարակութեանը, հակառակը՝ հասարակութիւնն է դառնում պետութեան գործունէութեան ասպարէզը, նրա ցանկութիւնների ու շահերի գործադրման վայրը։ Աչքաթող էր արուել մարդկային գործոնը։ Անհնար է վերահսկել ամբողջ իրականութիւնը՝ եթէ աշխատաւորն անմիջական տէրը չէ պետական սեփականութեան։ Անհնար է զսպել մարդու ընչաքաղցութիւնը գաղափարական քարոզներով։ Ստեղծում է այնպիսի իրավիճակ, երբ ինչպէս կառավարութիւնը, այնպէս էլ ներքեւում սեփականատիրական բնագդով առաջնորդուող դասը օտարւում են հասարակութիւնից։ Առաջինը եւ վերջինը յայտնուում են «արտօնեալ» վիճակում, քանի որ իրականում նրանք են տնօրինում հասարակութեան

ունեցուածքը՝ Պետութիւնը վերեւից պարտադրում է այն բարեկարգութիւնները, որոնք կը պահպանեն իրեն՝ պետութեանը։ Ամրողջ հասարակութիւնը «կազմակերպւում» է պետական կայացման սկզբունքներով կամ էլ դրանց համապատասխանութեամբ։ Շեղումներ չկան։ Պետական կառոյցի անկումը ենթադրելի է դարձնում ողջ հասարակութեան անկումը։

Եթե իշխանի համար կեանքը պայքար էր ու գործ, ուժերի գերազոյն լարումով խոչընդուները յաղթահարելուց յետոյ ինքնարաւութեամբ շրջապատին հայելու կարողութիւն, ապա Արտաշին պատակը շատ է եսասիրական։ «Ծննում ենք, դասաւրում-ապրում, մեռնում» (89)։ Արժէք, բարիք ստեղծելու փոխարէն պիտի դրանք իւրացնելու ձեւեր գտնես, քո կեանքն էլ դասաւրես։ Արտաշների երազանքը վերեւների աշխարհն է, որտեղ հարստութիւն կայ, գեղեցկութիւն, տղամարդ ու կին։ Ցաւն էլ այն է, որ ինքը չկարողացաւ ապրել այն հեշտանքը, ինչ ապրել է հնդիկ ռաջան։ «Սա ցեխոտուածի ցեխոտելու ցանկութիւն է, թէ՞ աշխարհն ունի մի որիշ երես, որ ցոյց է տալիս միայն նրանց։ Աստուած մարդուն ստեղծեց իր պատկերով, Արտաշն իր պատկերին է բերում աշխարհը» (89)։

Նոր ժամանակներում տարբերուելու սնափառութիւնն աւելի է զօրեղացել, քանի որ այլեւս տարբերուելը հեշտ չէր։ Աշխարհը փոքրացել է, ամէն ինչ դարձել է սովորական, Ֆրանսիա զնացող-եկողն այլեւս յայտնի մարդ չէ, նոյնիսկ զոկին չեն ճանաչում։ Սափրուեցին, «խառնունցին իրար դիրեկտոր ու քանուոր, գող ու միջիցիոներ։ Արտաշ ես՝ ջոկուիր» (94)։ Ժամանակի սրբնթաց հոսքն իր հետ բերել է նոր սերունդ, որ մզումների մէջ դարձել է անգուսպ ու լկտի։

Արտաշը փորձում է իր նկրտումները տեսնել ուրիշի՝ ապահովուած երիտասարդի մէջ։ Եթէ նա ժամանակին կենուորուհու սենեակ էր մտնում հօրից թաքուն, յետոյ՝ բացայայտ, ապա այսօր զոկի տղան՝ ամենաապահովն ու լկտին, քարչ է գալիս դերասանուհու ետեւից՝ անտեսելով մերժումները։

Ժամանակի սրբնթաց հոսքը տանում էր ամէն ինչ։ Դժուար է դրա ետեւից հասնելը։ Երէկուայ երեխան այսօր ինժենէր է ու ծխախոտը բերանին ցուցումներ է տալիս յիսուն-վաթսուն տարեկան մարդկանց։

Աւելին՝ խելքի առումով էլ տարբերուելը գժուար էր։ Մեծ վովան մի կողմ էր դնում փիզը եւ շախմատում տանում հօրը։ Իսկ նրան էլ կայարանում յաղթում է Մմակուտի ուսմասվարի եօթ տարեկան տղան ու այն է՝ յայտնի էր դառնալու, թուրք չորանը յաղթեց նրան, նստեց զնացքը՝ իրպէսներին խառնուելու համար։

Որոշակիօրէն աղճատում են ընտանեկան յարաբերութիւնները։ Դերասանուհին գնում է Ռոստովի հէրանց, չի երեւում երեք ամիս, ամուսինը շրջում է Եւրոպայում, երեխաներին նայում է հինգ երեխատէր

քոյթը: Կինը վերադառնում, ներում էլ չի աղերսում, սկսում են ապրել որպէս ‘կուպէ’ի հարեւաններ, նրանք սպառել էին իրենց ջերմութիւնն ու ներութը: Ապրելն էլ դժուար էր: Արտաշը համոզուած է, որ ոմանք ապրում են, ոմանք՝ աշխատում: Իշխանն աշխատում էր, չէր ապրում: Ամէնքն էին ձգտում հեշտ ապրելուն, դրանց համար ուղղակի տեղ չկար, միակ միշարժան վայրը կամուրջն էր, որտեղ լուսանկարիչները իրար ձեռքից մարդ էին խորւմ: Անհաշուարկ ու անհեռատես քաղաքականութիւնն անելանելի իրավիճակ է ստեղծել: Մարդկանց ուժը չի օգտագործւում ինչպէս հարկն է: Իրենց կարիքները հոգալու համար մարդիկ հարկադրուած են լրացուցիչ, «փափախ» աշխատանք կատարել: Եւ քանի որ պետութիւնը չի կարողանում տարրական պահանջներն իսկ բաւարարել, ուստի աչք է փակում դրա դէմ: «...Պետութիւնը շգիտի՝ որ Արտաշը փափախով է ապրում» (107): Իսկ տանը, ընտանիքի անդամների հետ շփուելիս անհնար էր ապրել «փափախով»: Այստեղ վրիպումներն աւելի ակնյայտ էին: Արտաշը մի քանի անգամ քարնջեցուն՝ խորթ մօրը, ծեծելուց յետոյ տանից դուրս է անում, նա էլ ի վերջոյ գնում է կամսարի որբերի մօտ: Արտաշը դուրս է անում նաև մեծ վովային, որ նրա առաջին կնոջից մնացած երեխան էր՝ վէպ գրողին, օտար լեզու սովորողին: վերջինս մօր մօտ քան օր մնալուց յետոյ հեռանում է, քանի որ չէր կարողանում տանել մօր ամուսնուն, որ տարիքով էր, սիրուհի էր պահում ու ծեծում էր մօրը: Մմակուտում էլ միայն քան օր է մնում, զայրանում է հօրաքրոջ ամուսնու խեղճութեան վրայ եւ զգում հօրաքրոջ նեարդայնութիւնից, ու գալիս է Ոսկանի տուն՝ Դեւոյի մօտ:

Նրանց երկուսի համար էլ զգուելի էր դառում աշխարհը, անտանելի էր մարդկային ստորութիւնը, որ ամէն քայլափոխի յառնում էր նրանց առջեւ: Նրանց մէջ ստեպ-ստեպ քլթքլթում էր իշխանի արիւնը, բայց յաջորդ պահին այն սառչում էր աշխարհի գայթակղութեան, ցեղի խեղճութեան առջեւ ու ամէն ինչ մնում էր նոյնը, անյաղթահարելի: Ձեւաւորում էր կուսակցական բիւրոկրատիզմը: Նրանց տարեկիցը՝ Դեւոյեան հարբած տրակտորիստի որդին, շրջկոմի երկրորդ քարտուղարը, իր վարքով ու կենցաղով անրարոյականը, ապահով ու լաւ է զգում, ձեռքի հետ «լաւութիւն» է անում Վովային ու Դեւոյին: Նրանց աչքում էլ օրինակելի տղայ էր երեւում՝ իր մեքենագրուհով, փողկապով ու հեղութեամբ:

Կուսակցական մարմինները վերեւից վերահսկում են մարդկանց եւ անձնական կեանքը, եւ հասարակական գործունէութիւնը՝ «ճիշտն» ու «սխալը» որոշելու իրաւունքը վերապահելով բացառապէս իրենց: Այս ամէնն այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ երկիրը լուծում էր «համաշխարհային» կարգի խնդիրներ: Իսկ նման առաքելութիւն իրականացնող երկիրը նաև համաշխարհային ծաւալներով թշնամի պիտի ու-

նենար, եւ դա դրամատիրական աշխարհն էր: Յետագայում, պատերազմից յետոյ, այդ թշնամին Ամերիկան էր: Իհարկէ, այս ամէնի մէջ ճշմարտութեան որոշ բաժին կար, սակայն դրանք այն փաստարկները չէին, որ «արդելէին» ընտրուած ճանապարհը շարունակելու մտադրութիւնը: Համակարգը չի կարողանում գործնականում ապացուցել իր առաւելութիւնները:

Այս ամէնի յստակ արձագանգը կայ Մաթեւոսեանի վիպակում: Անդրօն, որ Փիզիկական մեծ ուժ ունի եւ որ ամէնից կարեւորն է՝ կոմերիտմիութեան շրջկոմի երկրորդ քարտուղարի հայրն է, մշտապէս հարբած է ու «զգօն»՝ երկրի թշնամիների հանդէպ: Նա իր անբարոյական, բայց շրջապատի համար օրինակ ծառայող որդուն մէնակ չի թողնի երկրի թշնամիների դէմ «պայքարում»: Պատերազմում գերմանացիներին ինքն է յաղթել, իսկ «Փաշխտացող էլեմենտների» հէրն անիծելու է որ-դին: Մարդը տնով-տեղով սովետական պետութեան հիմքն է, ուրեմն միշտ պիտի «զգօն» լինել՝ իր օրինակով: Նա գիւղի մօտ անհասկանալի ռուսերէնով խօսող երկու «լրտես» է ըռնել, որոնք եկել էին Միկոյեանի ծննդավայրը «պայթեցնելու», իսկ երբ Դեւոյեան «օպեր-քննիչը» նրան բացատրել է, որ ընկերները մոսկուացիներ են եւ պարզապէս ցանկացել են Անաստաս Խւանովիչի ծննդավայրը տեսնել, Անդրօն շարունակել է յամառել. այդ դէպքում նրանք ծննդավայրը նայելու գրութիւն պիտի ունենալին... Ու զարմացել է, որ թուլտուութիւն չունէին, բայց նրանց չգնդակահարեցին:

Բարոյական աղէտը կործանում է նաեւ Զարմայրին՝ երկրի երէկուայտիրոջը: Թէեւ կինը երեխայ չէր ունենում, բայց նա չի բաժանւում նրանից, սկսում է պահել քենու երկու երեխաներին՝ ինչպէս մարդ չի պահում սեփական երեխաներին. գրքից բացի նրանց ձեռքը ոչինչ չի վերցնում գիւղի ծանր աշխատանքում: Ու թւում էր՝ հոգատարութիւնը կարգին մարդիկ էր ստեղծում, տղան բժշկականում էր, աղջիկը՝ թատերականում: Բայց նրանք իր արեան կրողը չէին. տղան հեռանում է Ռուսաստան՝ այնտեղ աշխատելու: Աղջիկը չամուսնացած՝ յղիանում է: Թէեւ ժողովատրոնում նրան ծափահարում էին, բայց եւ ինքն էր կոտրուած, եւ Զարմայրը: Նա տանուլ է տալիս նաեւ հասարակական կեանքում. կեանքը կարգաւորելու նպատակով երէկուայ աւագակից՝ Արտաշից, օգնութիւն է խնդրում ու այլեւս աշխատանքի դուրս չի գալիս: Պատմավէպեր է կարդում ու երանութեամբ մտածում է անցեալի մասին: Նա այլեւս այս ժամանակի մարդը չէր, «նախց ընկած իրի պէս ճօնում էր իին ջրերի վրայ» (111):

Բարոյական աղէտը, որ կատարուել էր մարդկանց հոգիներում, իր դրսեւորումը գտնում է նաեւ իրականութեան մէջ: Մեծ կամուրջը քանդւում է: Երեք տարի շարունակ կառուցել էին, սակայն աշխատանքն անկիրք էր ու աննպատակ: Օր էր լինում՝ հինգ շարք էին դնում, օր

կար՝ երեսուն, չարաթ էլ կար՝ ոչ մի չարք։ Մախսուող միջոցները եօթ անդամ գերազանցել էին նախատեսուած չափը։ Մինչ աւարտին հասցնելն էլ պարզ էր, որ քանդուելու էր. շատ անհաւասար էին աշխատում։

Հեղեղն իր վրայ վերցրեց քանդուելու պատրուակը։ Գետը խեղդուած գոմէշներ ու կաղնիներ բերեց։ 1912ին կառուցուած ֆրանսիացի գործարանատիրոջ էլեկտրակայանի պատը քանդուեց։ Արանք «արդարացնում» էին երէկուայ անհոգի ու անխիղճ գործելակերպը։ Այս ամէնի դէմ՝ որպէս ահագնացող պարսաւանք, վեր է խոյանում Նանա իշխանուհու ութհարիւրամեայ կամուրջը։ Նախնիները կառուցել են նաեւ գալիքի համար. այսօր՝ անգամ իրենց համար չեն կառուցում։

Մարդկային բարոյականութեան հիմքերը վաղուց են աղտոտուել։ Առաջին հայեացքից է թւում, թէ Ոսկանի եւ Արտաշի միջեւ ձգուող հակամարտութիւնը սկզբունքային բնոյթ ունի. Նրանք ձեւաւորում են հասարակութիւն, որտեղ մարդիկ առանձնանում են հեղհեղուկ բնաւորութեամբ ու անկանխատեսելի վարքագծով։ Աւելի դժուար է Ոսկանի համար. նա գիտակցում է սեփական մեղքը։ Նա թոյլ էր տուել, որ ժանտախտը դառնայ քառասուն տարեկան եւ ապականի միջավայրը, իսկ հիմա դրա դէմ մաքառելն անհմաստ է։

Արտաշն էլ իր հիմնաւորումներն ունի. եղբօր մեղադրանքները նրան անտեղեակ մարդու խօսքեր են յիշեցնում, չէ՞ որ ինքը զոկի կողքին ոտքերն ամպոտ հրեշտակ է։ Ոսկանի համար Արտաշը գետնի վրայ ման գալու արժանի չի, քանի որ նա նեղացրել, աղճատել, ոչնչացրել է կեանքի հմայքը։ Աշխարհը նրա աչքին գողերի ու միլիցիայի կռիւ է։ Բայց ինչպէ՞ս կարելի է աղտոտել, փչացնել կեանքը, որ մարդուն տրուած վերին շնորհ է։ Ոսկանը փնտուում ու չի գտնում նրան, ում կարելի է «մարդ» ասել. «Եթէ Մեծ կամորջի աշխենկը ցեմենտը շծախէր քեզ՝ նա կը լինէր այդ մարդը, եթէ դու ցեմենտը շատնէիր՝ դու կը լինէիր։ Ու Վովային չկորցնէիր, ու քարնջնցուն շծնելիր, ու չգողանայիր։ Եթէ ես խմելիս շինելի՝ ես կը լինէի այդ մարդը» (125)։

Մարդկային բարոյականութիւնը գլխիվայր շրջուել է։ Այն, ինչ երէկ համարում էր անբարոյականութիւն, դա էլ Արտաշը համարում է «մարդութիւն»։ Ճիշտ է՝ Ոսկանը ասողներից էր, չէր լրում, բայց կեանքի հարուածների դէմ դարձել էր աւելի խոցելի։ Իշխանի «առնաուտ»՝ անխիղճ, զրնգուն արիւնը յաճախ էր տեղի տալիս տաժանակրի՝ մօրենական կողմի արեան առջեւ։ Ոսկանը մնում էր աշխարհի անարդարութիւնների առջեւ վիզը ծուռ ու ենթակայ։

Ստեղծուել էր այնպիսի իրավիճակ, որտեղ օրէնքի գործադրումը կապուած էր խիստ որոշակի մարդկանց ցանկութիւնից, նոյնիսկ տրամադրութիւնից։ Հետեւապէս եւ անկանխատեսելի էր սպասուող արդիւնքը։ Եւ քանի որ Ոսկանը տպաւորուող բնաւորութիւն ունի, նրա

ապրումներն ու խօսքի ելեւէջները յաճախ են դուրս գալիս «պահի» սահմաններից: Ինչի՞ համար էին այդքան զրկանքներն ու տառապանքները, ինչի՞ համար էին այդքան կորուստներն ու մահերը... Զէ՞ որ մարդիկ ընկան յանուն լաւ օրուայ, յանուն պայծառ ապագայի, իսկ արդիւնքում... խարուած է ոչ միայն Ռուկանը, այլև Հայկազը, բորբ նրանք, ովքեր պառկած մնացին օտար հողում: Եւ հիմա Ռուկանը՝ միակը մեծ գերդաստանից մնացած, լաց է լինում իր անզօրութեան, ինչպէս եւ սերունդների ներկայ ու անցեալ դարձած պարտութիւնների համար:

«Ռուկանն աշքերը կուչ էր ածել. կարծես թէ դա զզուանքից էր, քայց պարզուեց, որ լաց է լինում, եւ ծայնն էլ տարօրինակօրէն բարակել էր: Յեսոյ նա, իրեն կորցրած, խլեց Արտաշի ծեռըն ու ոլորեց:

- Ասում ես մարդը Ռուկանն է: Ասա: Մարդը Ռուկանն է:
- Ե, մարդը Ռուկանն է... Յեսոյ՝...
- Պոլոնէզ,- ասաց Ռուկանը:- Ապրես: Հիմա մազնիտաֆոնդ միացրո՞ւ միացրած ասա:
- Յեսոյ՝, ել գեադայութիւն զիտե՞ս...
- Սիացրու:- Եւ Ռուկանը հաստ մատներն իրար հազցրած սպասեց,- դէ: Պոլոնէզ» (127):

Հոգերանօրէն պարտութիւնը կատարեալ է: Նրան «լրացուցիչ» հիմնաւորումներ են պէտք՝ իր մարդկայնութեան մասին: Քանի որ «ժամանակի հերոսութ» Արտաշն է, այդ հաւաստիացումները ուզում է նրանից լսել, մինչդեռ դրանք սուտ «արդարացումներ» են անցեալի յիշատակների առջեւ: Նրա հոգում արդէն աղարտուած են հայրենի գիւղի պատկերն ու ոգին: Պարզապէս անհրաժեշտ էր այնպիսի առիթ, որ ինքն անկեղծօրէն խոստովանէր պարտութիւնը եւ ընդունէր Արտաշի «ճշմարտութիւնը», քանի որ իր կաշուի վրայ էր զգացել սեփական թուլութեան հետեւանքները: Որդին չէր ներել հօրը խեղճութեան համար, ինքն էլ հասկանում էր, որ խեղճ ապրելն անտանելի է: Մարդն ապրելու լաւ պայմաններ պիտի ունենայ, դա անհրաժեշտութիւն է. «Ուժեղ պիտի լինես, ուժեղ դ, զոռաց Ռուկանը,- ամէն ինչ պիտի ունենաս, պիտի մարդու պէս ապրես...» (134): Այս եզրայանգմանն է գալիս այն պահին, երբ տեսնում է եղրօր յարմարութիւնները, սենեակները, սառնարանը, դաշնամուրը: Մրանք տանը: Իսկ դրսո՞ւմ: Այնպիսի պայմաններ են ստեղծուած, որ Արտաշի նման եզրայը ունենալի անհրաժեշտութիւն է թւում:

Ինչ որ ծեծկուառութից յետոյ, ոստիկանատանն առժամանակ մնալուց յետոյ, առաւել քան ակնյայտ էր Ռուկանի անպաշտպանուածութեան զգացողութիւնը: Հինգից եօթ տարի էր արժենալու բուֆէտապանին «մարդ դարձնելու» նրա ցանկութիւնը: Անգամ նրան յանցակից Անդրոյի քարտուղար որդին չէր կարող որեւէ բան անել Ռւ տոհմը, վրգը ծռած, յուսահատ նայում էր իշխանի գերեզմանին... Փրկութիւնը

գալիս է յանկարծակի, եւ գալիս է Արտաշից: Նա քչփչում է զոկի հետ, զոկը՝ բուֆետապանի որդու հետ, յետոյ էլ ամենազօր կաշառքը, ուստորանում սարքած խրախճանքն իրենց գործն անում են: Այլեւս չի գործում օրէնքը, գործում է «պայմանաւորութիւնը»: Առաջացել է որոշակի յանցագործ խաւ, որ հարցերը լուծում է սեփական ցանկութեամբ:

Արդէն խնճոյքի սեղանի շուրջ, որտեղ լիքն է ուտելիքն ու բազմազան է սպասքը, Ռուկանը՝ հպարտ եղրօր ունեցածով, լսում է կողքի սենեակից եկող երաժշտութիւնը: «Եւ կեանքը բում էր տխուր մեղենի» (131): Տիտուր է կեանքը Ռուկանի համար, քանի որ երբեմնի ընդդիմադիր ոգին տեղի է տուել: Նա այլեւս համակերպուել է ստեղծուած կացութեանը: Նա հոգերանօրէն փոխուել է թող Արտաշին շթուայ, թէ եղբայրը խեղճ է, ինքն էլ պակասը չի, ինչ կարողացել է՝ տուն է բերել: Արտաշի տան ապահովուածութիւնից եկող տրամադրութիւնը փոխանցում է եւ Զարմոյին: Նա ուզում է Արտաշի «մի բանն էլ ինքն արած լինել» (139): Ռւստիեւ յայտնի «Տրապիզոնի պատմութիւնն» իմաստաւորում է բոլորովին այլ կերպ: «Լսած կը լինես, որ իբր կնեազ Նիկոլն ինձ ծեծել է: Չկարծես, թէ ինքը ծեծել է, ես նստած սպասել եմ, որ ծեծի չէ: Ինքը բան ասավ, ես մտքիս մէջ ասի «Աէ ուաղի քաշիր, հարբեցող շանորդի...» (139): Արտաշի ազդեցութեամբ Զարմայրը նաեւ հոգերանօրէն փոխում է: Ստացւում է, որ սա հոգով խարդախուած մարդկանց հասարակութիւն է:

Յայտնւում է Արտաշի կինը՝ Դուսիան եւ համոզում է ամուսնուն նախապէս ստուգել խանութը, որովհետեւ շուտով կը սկսուեն յանձնաժողովի ստուգումները: «Արտաշն ու Դուսիան թերուեցին շուկայի կողմը, իսկ զիդացիները երկար նայում էին նրանց ետևից՝ հպարտ այն բանի համար, որ նրանք Դեւոյեան են, եւ իրենք էլ Դեւոյեան են» (140):

Հոգերանական վերափոխումը կատարեալ է, մարդկային բարոյական անկումը՝ եւս:

Միանգամայն պարզ է, որ այս վիպակը 1963ին չէր կարող տպագրուել, այնքան բացայաց եւ ուղղագիծ էին մեղադրանքները, որ «խուսանաւելու» տեղ չէին թողնում: Այն սպասելու էր նպաստաւոր ժամանակի: Սա հարցի տեխնիկական կողմն էր: Աւելի կարեւոր էր դրա բովանդակային կողմը: Գրողը կռահել էր վաղուայ օրը: Իրականում մարդկային փոխյարաբերութիւնների այն որակը, որ ներկայացւում է «Տաշքենտ»ում, կար կէս դար առաջ գրուած վիպակում: Ճիշտ է՝ դրանք միանգամայն տարրեր գեղարուեստական արժէք ունեն, բայց հայեացքի ընդհանուր ուղղութիւնը չի փոխուել: Փոքր համայնքների միախառնումը ելք չի առաջադրում, մարդն ըստ ամենայնի չի կարողանում իրացնել ներունակ ուժը, արարելու, ստեղծելու բեռը նրանից

վերցնում է պետութիւնը, մարդը դառնում է կատարող՝ նախաձեռնութիւնից զուրկ: Անտեսւում են մարդն ու նրա անհատական որակները, ինչը նրան տրուած ամենամեծ արժէքներն են:

Մատուցման ձեւի առումով վիպակը «մասին» գրականութիւն է: Գրողն աւելի շատ հերոսների բերանով պատմում է, քան ցուցադրում: Բացակայում է բնանկարը, որովհետեւ նպատակը մարդկանց հոգերանութիւնը ներկայացնելն է եւ ոչ այնքան որեւէ պատմութիւն պատմելու Բայց ինչպէ՞ս է գրողը հիմնաւորում, պատճառաբանում իր հերոսների արարքները կամ հոգերանութիւնը: Հերոսներին առանձնացնում է բնութիւնից ստացած որակներով: Այս պարագայում կապ չունի՝ մարդը ինչ իրադրութեան մէջ է գործում: Նրա անհատական որակները մարդուն առաջ են տանում տարբեր շրջափուլերում: Բայց սա չի նշանակում, որ հանգամանքները չեն կարող չազդել մարդու վրայ: Մարդկային էութեան մէջ է բարին եւ չարը, դրանք դրսեւորուում են առարկայական հանգամանքների գործակցութեան չնորհիւ, հանգամանքների ազդեցութեամբ մարդը կարող է վերափոխուել: Վիպակի ներքին տրամաբանութիւնը մարդկային հոգերանութեան, մարդու մանրացման մասին պատմութիւն է: Երեւոյթի հոգերանական ներգործութեան գրողը հասնում է դէպքերի թուարկմամբ կամ կողմնակի արարքներ ներկայացնելով, այլ կերպ՝ անուղղակիօրէն: Իշխանի գաւակը՝ Արտաշը, որ նոր ժամանակի «Հերոսն» է, դառնում է... խաղալիքների խանութի աշխատող՝ օրը տասը ուուրլի գողօնով: Աւելին՝ տեղի է ունենում հասարակութեան վերասերում. մարդը յարմարւում է իր նոր վիճակին (Զարմայր, Ոսկան): Այժմ արդէն նա ինքնակամ արձագանքում է շրջապատին այնպէս, ինչպէս որ նոր «բարոյականութեամբ» առաջնորդուող շրջապատն է արձագանքում նրան: Մեծ աշխարհը Դուսիայի կերպարով ու բարոյականութեամբ սողոսկում է դժուարութիւններ ապրող միջավայր՝ հասարակութեան ունեցուածքը քամելու խիստ որոշակի նպատակներով: Եթէ իշխանի պարագայում կինը երեւոյթների մէջ չունէր այն դերն ու նշանակութիւնը, նա չէր կարող որեւէ բան պարտադրել, ապա Արտաշը Ռուսաստանից բերած կնոջը դարձել է ենթակայ: Դուսիան հասարակութիւնից գողանալը դարձնում է ապրելաձեւ: Նա նոր բարոյականութիւն է արմատաւորում այս իրականութեան մէջ: Նա իր արտաքինով անգամ տարբերւում է հայուհիներից: Ոսկանի կինը սկզբում ձեռ է առնում Արտաշին. «Պոլչայից ես քերե՞լ թէ Չեխովովակիայից: Ել չկա՞ր. մեկն ել Ոսկանի համար բերէիր, ինձ հաւան չի» (91): Բայց շուտով միջավայրը սկսում է բարեացակամօրէն տրամադրուել նորեկի հանդէպ: Ոսկանի կինը՝ Սրբուհին շուռ տուեց հին խօսքը. «Դուսիայի տունը շինուի, իմն ել հետո, են ահազին Ռուսաստանում մարդ չգտա՞ւ, դու էիր մնացել, քեզ գտա՞ւ...» (91): Երէկուայ ընդդիմադիր կեցուածք ունեցողներն էլ այսօր «հպարտ» են, որ

Հասարակութեան ունեցուածքը թալանող բարեկամներ ունեն, նրանց համար ստեղծուած կացութեան մէջ այլ ելք պարզապէս գոյութիւն չունի:

Դժուար է ասել, թե տպագրուելու պարագայում այս երկն ինչ ագդեցութիւն կ'ունենար հայ գրականութեան, ապա նաեւ հենց Մաթեւոսեան գրողի ստեղծագործութեան վրայ: Յամենայնդէպս հրապարակախոսական ներքին այն որակը, որ կար Ահնիձորում, առաւել ընդարձակ հարցադրումներով ի յայտ եկաւ այստեղ: Սա իրականութեան մասին ասուած բաց, ճակատային խօսք էր, որ զայրացնում էր պաշտօնական քննադատութեանը: Սա աւելի խօսում էր գրողի համարձակութեան, քան գրական կարողութիւնների մասին: Բայց վիպակը վկայում էր եւ հեղինակի՝ կեանքն ընդարձակ սահմաններում ճանաչելու մեծ մղումի մասին, որտեղ արգելում էր ոտք դնել: Միանգամայն ակնյայտ էր, որ կեանքն ճանաչողութեան, բնաւորութիւնների բացայատման տեսանկիւնը դուրս էր ընդունուած ձեւերից ու կանոններից: Այնքան մեծ էր կեանքն ամբողջութեան մէջ տեսնելու գրողի ձգտումը, որ դրա կողքին նոյնիսկ երկրորդական էին թւում երկրի գաղափարախօսութիւնը մեկնարանողի դերը մերժող եւ այդ գաղափարախօսութեան հետեւանքները քննող հեղինակային դիրքորոշումը:

## ՄԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

<sup>1</sup> Հրանտ Մաթեւոսեան, ծռ ծռ ծռ: Հարցազրոյցներ, «Ուսկան Երեւանցի» Հրատ., Երեւան, 2005, էջ 316.

<sup>2</sup> Վաշագան Գրիգորեան, «Մաթեւոսեանի Ստեղծագործութեան Զարգացման Շրջաններ», Մաթեւոսեանական Ընթերցումներ, Երեւանի Համալսարանի Հրատ., Երեւան, 2006, էջ 153: Այսինքն կուսական գիւղը նահանջում է նոր ուժերի առջեւ, այս միտքը, որ հեղինակին միագիծ, միաշերտ է թուացել, մենք չենք տեսնում նրա յիտագայ դրժերում:

<sup>3</sup> Հրանտ Մաթեւոսեան, Նանա Իշխանունու կամուրջը, «Օգոստոս», Երեւան, 2006, էջ 38: Յետայու, վիպակից կատարուած բալոր մէջքերումները նոյն գրքից են. լղումը կատարում է տեղում:

<sup>4</sup> Ֆ. Նիցչ, «Բարից եւ Զարից Անդին», Չաստուածների Մթնչաղ, Ապոլոն Հրատ., Երեւան, 1992, էջ 151.

<sup>5</sup> Nitche, Volya K Vlasti (Կամք առ իշխանութիւն), Երկերի Լիակատար Ժողովածու, Հայր. 9, «Մուկովսկով Կնիգոփագատեստվօ», Մոսկու 1910, էջ 129:

<sup>6</sup> A. G. Kutluini, Nemetskaya Filosofya Jizni (գերմանական կեանքի փիլիսոփայութիւնը), Իրկուցկ, 1986, էջ 36:

<sup>7</sup> M. A. Yusim, Etika Makiaveli (Մաքիավելու էթիկան), «Նաուկա», Մոսկու, 1990, էջ 20:

<sup>8</sup> Նոյն, էջ 17, 20:

---

PRIVATE AND PUBLIC HUMAN ISSUES AS INTERTWINED FACTS IN HRANT MATEVOSIAN'S SHORT NOVEL, CALLED "NANA ISHKHANUHU GAMURCHE" (PRINCESSE NANA'S BRIDGE)

(Summary)

VACHAGAN GRIGORIAN

vachik\_grigoryan@mail.ru

In this article Grigorian analyses the characteristics of Hrant Matevosian's *Nana Ishkhanuhu Gamurche* (Princesse Nana's bridge) a short novel, which was written in the 1960s but first published in 2006.

Unlike the "Anhnidzor" essay, where Matevosian highlighted his worries about the negative changes in the village, this short novel raised broader questions immediately related to the economic management policies of the Soviet Union. The events presented in this short novel start in the 1918 and extend up until the early 1960s. They depict a complete picture of social destitution, which was to spread throughout the country in the next quarter of a century.

Grigorian notes that Ishkhan, who was to become a central character in Matevosian's literary works, was first introduced in this short novel. Indeed, Ishkhan, one of Matevosian's most important heroes, is the precursor and harbinger of the writer's unique world perception that was to be further developed in his literary works of the coming years.

Grigorian stresses that alongside the impressive characters that stand out in this short novel, Matevosian has deeply examined the economic management policies of the time, as well as the consequences of the implementation of the ruling ideology. He concludes that irresponsibility, disorder and the shortfalls of economic management made men apathetic and generated an impasse. The situation was like a time bomb, ready to explode when controlling it became impossible. The end result was the production of a society where men were both mentally and spiritually numbed and deceived. Furthermore, Grigorian underpins the fact that Matevosian mocked both Soviet superpower pride and its baseless humanism, which were brought into existence at the expense of too many human sacrifices.

Grigorian points out that the second part of this short novel had space for further development, but Matevosian had left it aside as the issue had "become old" in contrast to its fast maturation in real life. As such, it was seen to be a complete literary work that fell short of the author's intentions, so he had no inclination to return to it for further development.

Grigorian concludes that the questions raised in this short novel were so daring that it was simply impossible to publish it at that time.